

Հ.Յ.Դ Հայաստանի Գերագույն մարմինը որոշել է պաշտպանել Նիկոլ Փաշինեանի թեկնածությունը

Վարչապետի միասնական թեկնածուի եւ քաղաքական օրակարգի շուրջ համախոհությունը, որի անհրաժեշտութեան մասին յայտարարել էինք, կարող է դառնալ իրականություն:

Առ այդ, Հ.Յ.Դ Հայաստանի Գերագույն մարմինը որոշել է մայիսի 1-ին կայանալիք վարչապետի ընտրություններին պաշտպանել Նիկոլ Փաշինեանի թեկնածությունը:

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ

Ամրագրել պետականությունը ու օժտել զայն ժողովրդավարական բարձրագույն արժանիքներով

Նոր ժամանակներու մէջ առաջին անգամ ըլլալով, հայ ժողովուրդը իր երկու՝ հայրենական ու սփիւռքեան թեւերով միասնաբար կը դիմագրաւէ մեր անկախութեան ամրապնդման, ժողովրդավարութեան ամրապնդման եւ պետականութեան հզօրացման մարտահրաւէր մը: Երեւանի մէջ Ապրիլեան քաղաքացիական շարժումով նոր էջ կը բացուի:

ԿԱՐԳԱՆ ԷՋ 3

Մոնթրէալի Ս. Յակոբ Ազգային վարժարանի ճաշկերույթին հանգանակուեցաւ 230,985 տոլար

Կարդալ էջ 5

Լորի Ապրաքեան Գնահատուեցաւ Մոնթրէալի Ս. Յակոբ Ազգ. վարժարանի տնօրէնուհի



20 Ապրիլ 2018-ին օրդ. Լորի Ապրաքեանը նշանակուեցաւ դպրոցի տնօրէնուհի: Օրդ. Ապրաքեան դպրոցի մէջ կը պաշտօնավարէ 2010 Օգոստոսէն, որպէս դաստիարակ նախակրթարանի 5-րդ կարգին, Օգոստոս 2016-ին նշանակուեցաւ առժամեայ փոխ-տնօրէնուհի եւ Սեպտեմբեր 2017-ին՝ նախակրթարանին պատասխանատու փոխ-տնօրէնուհի:

Օրդ. Ապրաքեան վկայուած է Մըգ Կիլ համալսարանէն Bachelor of Education, Kindergarten and Elementary տիտղոսով եւ Մոնթրէալի համալսարանէն (Ապրիլ 2018) ստացած է Maîtrise professionnelle (M.Ed) Leadership et gestion des établissements-ի: Ան իր պատասխանատուութիւնը կը ստանձնէ 1 Օգոստոս 2018-ին: Յաջողութիւն կը մաղթենք օրդ. Ապրաքեանին՝ իր նոր պատասխանատուութեան մէջ:

Սուրբ Յակոբ Ազգային վարժարանի վարչական խորհուրդ

Ազգային Ժողովի ՀՅԴ Խմբակցութիւնը Հանդիպում Ունեցաւ Նիկոլ Փաշինեանի Հետ



Կարդալ էջ 9

Քեպէզի Հայ Դատի յանձնախումբի պատուիրակութիւնը այցելեց Քեպէզի Ազգային Ժողով



Ապրիլ 24-ին Հայոց ցեղասպանութեան զոհերու յիշատակի օրուան առիթով, Քեպէզ նահանգի Ազգային Ժողովի նիստի ընթացքին ներկայ էր Քեպէզի Հայ Դատի յանձնախումբին (ANCO) գլխաւորած պատուիրակութիւնը: 1980 թուականէն, Քեպէզի Խորհրդարանը միաձայնութեամբ ընդառաջած է Հայոց ցեղասպանութեան յիշատակման առնչուող որեւէ առաջարկութեան: 2003 թուականին ներկայացուած օրինագիծին համաձայն Ապրիլ 24-ը հռչակուեցաւ «Ցեղասպանութեան զոհերու յիշատակի օր»: Պատուիրակութիւնը, ըստ իր տարեկան աւանդութեան, նաեւ այցելեց Կոմիտասի յուշարձանը:

Նկարին մէջ՝ Քեպէզի Հայ Դատի յանձնախումբի անդամներ եւ համակիրներ, Laval MNA Guy Ouellette, Jean Habel, Saül Polo, Minister Francine Charbonneau, Jean Rousselle, Monique Sauvé:

2018 PILOT MSRP STARTING FROM \$40,390*

2018 PILOT SHOWN

*Sales tax included. Visit Honda Gabriel for more details.


HONDA GABRIEL

7000, boulevard Henri-Bourassa E.
Montréal-Nord, QC H1G 6C4
514 327-7777
www.hondagabriel.com

Kevorg Asadourian
Vahan Vartanian
Haig Khobassarian

HONDA

Les saveurs de la méditerranannée...
le bon goût du partage !



Suivez-nous !



www.groupeadonis.ca



MARCHÉ

ADONIS

Ամրագրել պետականությունը ու օժտել զայն ժողովրդավարական բարձրագույն արժանիքներով

Պառակտումը, կամազրկութիւնը հասել են այնպիսի վտանգաւոր սահմանի, որ արդէն կասեցնում են ազգի վերարտադրուելու ձգտումը, բթացնում ինքնապաշտպանական բնագոյր: Ամենասարսափելին այն է, որ մեծ հաշուում են պարտութեան հետ, որին ինքնքր եմք մատնում օրեցօր: Վահան Յովհաննիսեան

Նոր ժամանակներու մէջ առաջին անգամ ըլլալով, Հայ ժողովուրդը իր երկու՝ Հայրենական ու սփիւռքեան թեւերով միասնաբար կը դիմադրուէ մեր անկախութեան ամրապնդման, ժողովրդավարութեան ամրապնդման եւ պետականութեան հզօրացման մարտահրաւէր մը: Երեւանի մէջ Ապրիլեան քաղաքացիական շարժումով նոր էջ կը բացուի:

Անկախութեան սեփական կռուաններուն ամրապնդումը Հայաստանի եւ Հայրենական ուղղուած մեծագոյն մարտահրաւէրն է այսօր: Շրջանային եւ միջազգային աշխարհաքաղաքական յարաբերութիւններու դասաւորումները դիմադրուելու տարբեր ելք չունի մեր Հայրենիքը: Այս խորապատկերին մէջ, այսօր ազգովին ամէն ժամանակէ աւելի պէտք ունինք ներազգային ճակատի վրայ համերաշխութեան եւ համախոհութեան: Պատմութիւնը մեզ սորվեցուցած է, որ ներքին համերաշխութեան նախապայմանը կայունութեան ապահովումն է՝ քաղաքական ծիրէն ներս ժողովրդավարութեան ամրապնդումով, իսկ տնտեսական մարզի մէջ ընկերային արդարութեան պահպանումով:

Համազգային մեր գոյատեւելիութեան կիզակեղոնը՝ մեր նորանկախ պետականութիւնն է, Հայաստանի եւ Արցախի հանրապետութիւններով: Աշխարհաքաղաքական բախումներու եւ մրցակցութեանց յարաշարժ յորձանուտին մէջ մենք այսօր իրաւունք չունինք ժամանակ վատնելու անօգուտ ու իմաստազուրկ ներքին վէճերու եւ կամ ծայրայեղ բեւեռացումներու մէջ միւրձուելու այլընտրանքով ընթանալու: Մենք այսօր ունինք պայծառ նոր սերունդ, որ մտաւոր իր ներուժով եւ այլ դրական յատկանիշներով օժտուած Հայրենիքի ճակատագրին պատասխանատու Հայրենակերտման անփոխարինելի բաղադրիչ գործոն է:

Չափազանցելով վերանկարացումէն ետք փորձութիւններու ուղին, կու գանք այն եզրայնութեան, որ իրերայաջորդ իշխանութիւնեանց արձանագրած սայթաքումներու, յաջողութիւններու եւ պատմական առիթներու կորուստներու համագումարի արդիւնքը՝ այսօրուան դրութեամբ կարելի է նկատել պետականութեան կայացման ճանապարհին նորանկախ պետական կազմաւորման առաջին քայլերը:

Պատերազմի պատճառով Հայրենիքի վրայ պարտադրուած է «ամբողջ պետութեան» վերածուելու այլընտրանքը, որուն զուգահեռ, տնտեսական ճգնաժամն ու անգործութեան պատճառով ծաւալ առած Հայրենալքումն ու արտագաղթը, ասօր, աւելի քան երբեք, Հայրենիքը կը դնեն կացութիւնը լրջօրէն վերաբեւոյնելու, ուժերը համախմբելու եւ համընդհանուր գորաշարժի ենթակրկիտ հարկադրանքին տակ:

Իրերու դրութեան նման ենթահողին վրայ Հայ քաղաքական մտքին առջեւ սուր կերպով կը դրուի սեփական տունը կարգի բերելու հրամայականը եւ պետականութեան կայունութիւնը նախապայման դաւանելու առաջնահերթութիւնը: Ազգի եւ Հայրենիքի վաղուան պայծառ օրը կերտելու եւ Հայ Դատի պայքարը իր արդար լուծումին առաջնորդելու երկարաշունչ երթին նախապայմանն է պետականութեան հզօրացումը:

Քաղաքական եւ ազգային բոլոր ուժերը ի մի բերելով, աղէտի համագոր արտագաղթի ճգնաժամէն ու տնտեսական անել դրութենէն դուրս գալու համար, համայն

Հայրենիքի անհրաժեշտ է այսօր ազգային փրկութեան համալիր ծրագրի մը իրագործումը:

Կացութիւնն ու ճգնաժամը յստակ են: Ի գին բազում զոհողութիւններու մեր վաստակած յաւաքաղաքներն ու նուաճումները աշխարհաքաղաքական ներկայ բարդ իրադրութեան մէջ պահպանելու համար, անհրաժեշտ է ամուր եւ կայուն պետականութիւն: Իսկ այսօրուան պայմաններով, նման պետականութեան մը երաշխիքը կրնայ հանդիսանալ Հայաստանի, Արցախի եւ Սփիւռքի տարաբնոյթ ներուժի համադրումը եւ այն հաստատ գիտակցութիւնը, որ ազգային մեր գոյատեւման ճանապարհը այսուհետեւ մենք ենք, որ կը տնօրինենք, սեփական մեր կամքով եւ միասնական անխորտակ շարքերով:

Այսօր պահն է ինքնաճանաչման ու ինքնասրբագրութեան, այն պահը, երբ ի մի բերելով նախկին մեր արձանագրած թերացումներն ու վրիպումները, հաշուետուութեան կարգով, քննարկման ենթակրկիտ մեր անցած ճանապարհը:

Ամրագրել պետականութիւնը. այս է օրուան հրամայականը: Օժտել զայն ժողովրդավարական բարձրագոյն արժանիքներով: Ախտազերծել զայն անօրինականութեան տարբեր ձեւաչափերէ, յատկապէս հովանաւորչութեան, ընտրակաշառքի, մենաշնորհային եւ փտախտի համագոր այլ բացասական երեւոյթներէն:

Պետականութեան կայացման այս հանգրուանին անկիւնադարձային պահ էր բարեփոխուած սահմանադրութեան վաւերացումը, ուր յատկապէս շեշտուած է դատական համակարգի անկախութիւնը, ընդ որում, արդարադատութեան եւ իրաւունքի գերակայութեան հիմերը գորացնելով պիտի նպաստէ ժողովրդավարութեան զարգացման ուղղուած ճիգերուն:

Պէտք է գիտակցինք, որ տնտեսութեան բնագաւառէն ներս, ազատ մրցակցութենէ գուրկ եւ մենաշնորհուած տնտեսութիւնը այլեւս լուրջ սպառնալիք է Հայաստանի համար: Մեղադրելի են եւ ընտրակաշառք բաշխողը, եւ ընտրակաշառք ընդունողը, իսկ իշխանութեան միանձնադաւանութիւնը կործանման ուղի տանող խոտոր ճանապարհ են մեզի համար:

Այսօր ժամանակն է, որ կերտենք ժողովրդավար ու արդար Հայաստանը, որպէսզի ապագայ սերունդները, իրենց կարգին, խորին պատասխանատուութեամբ տէր կանգնին ազգային մեր գերագոյն իղձերը իրագործելու անկորնչելի տեսլականին:

Հայաստան-Արցախ-Սփիւռք համախումբ ու միասնական ջանքերով կերտենք վաղուան նուաճումները: Իսկ այդ ապագայ նուաճումներն ու յաղթանակները կ'իրագործուին, երբ կը սնանինք պատմական մեր գոյամարտերու՝ սարդարապատներու եւ շուշիներու ակունքներէն, եւ երբ այլոց կողմէ մեր վրայ պարտադրուող ճնշումներուն դիմաց Հայաստան-Արցախ-Սփիւռք եռամիասնութեամբ անխորտակ ու ամրակուռ թումբ ու պատնէջ կը դառնանք:

Պահն է, որ ստեղծենք կայուն զարգացում, անփոքանգ երկիր եւ համերաշխ ու արդար Հայաստան:

«ՀՈՐԻԶՈՆ»

 <p>Aline Shnorhokian Mortgage Advisor Tel: 1 866 231-8876 Fax: 450 688-7555 Cell: 514 797-1375 aline.shnorhokian@cibc.com</p> 	<p>Groupe Sutton - Performer Inc. 123 Place Frontenac Pointe-Claire, QC H9R 4Z7</p>  <p>ALBERT ARKILANIAN Courtier immobilier résidentiel Residential Real Estate Broker aarkilanian@sutton.com Cell: 514.962.8822 Bor: 514.426.9595 Fax: 514.426.9596 *certaines conditions s'appliquent</p>  <p>Satisfaction garantie ou je revends votre propriété gratuitement!</p>	  <p>VÉHICULES D'OCCASION CERTIFIÉS</p>   <p>Kevork Asadourian Directeur des ventes - usagé Sales Manager - Pre-Owned kasadourian@gabriel.ca</p> <p>7000, Henri-Bourassa E., Anjou (OC), H1G 6C4 Tél : 514 327-7777, Cell: 514 318-4115, Téléc. : 514 327-7967 www.nissangabriel.com • www.hondagabriel.com</p>
 <p>École De Conduite Driving School Tel: 514-336-1110</p> <p>Moniteur-Instructeur AUTOECOEAZIG@HOTMAIL.COM 1400, rue Sauvé O, Montréal, QC H4N 1C5, Suite 1438 Centre Adonis II</p>	 <p>Personal & Corporate Tax Returns Financial Statements Bookkeeping Business Plan</p> <p>NATALIE SKAFF, CPA, CGA Comptable Professionnelle Agréée Chartered Professional Accountant</p> <p>nat.skaff@gmail.com Tel: (514) 963 3363 2866 Rue De Chamonix Saint-Laurent, Québec H4R 3B7</p> <p>Services available in Armenian, Arabic, English and French</p>	<p>BRING YOUR OWN WINE</p>  <p>NAZARETH CLASSIC GRILL</p> <p>550 Curé Labelle, suite 17, Ste-Rose, QC H7L 4V6 Tel: 450.937.4064 Email: resto.nazareth@hotmail.com</p>
<p>SAMUEL TOPALIAN 450 682-1644</p> <p>AUTO SAMSON</p>  <p>MÉCANIQUE GÉNÉRALE - REMORQUAGE SERVICE DE PNEUS MISE AU POINT</p> <p>4700 BOUL. SAMSON, CHOMEDEY LAVAL, QC.</p>	  <p>ՀԱՅԿ ԿԱՐՏՈՒՆԻԱՆ Hayk Hartounian Courtier immobilier résidentiel Residential Real Estate Broker</p> <p>C 514.574.6162 B 514.333.3000</p>	 <p>NETTOYEUR MARIE-CLAIRE</p> <p>CUEILLETTE ET LIVRAISON GRATUITE À DOMICILE ET AU BUREAU (MONTRÉAL ET LAVAL)</p> <p>2535 de Salaberry, Montréal Tél: 514.334.7830</p>

«Խաչքարերուն յարութիւնը»



Կիրակի, 22 Ապրիլ 2018-ի ժամը 12.00-ին, Ս. Յակոբ Առաջնորդանիստ Մայր եկեղեցւոյ մէջ օծուեցաւ Հայաստանի Առաջին Հանրապետութեան 100-ամեակին ձօնուած գունազեղ խորհրդապատկեր մը: Օծումը կատարեց Գանատայի Հայոց Թեմի Առաջնորդ Գերշ. Տ. Բաբգէն Արք. Չարեան: Խորհրդապատկերին անունն է «Խաչքարերուն յարութիւնը»: Զայն ստեղծագործեց տաղանդաւոր ու վաստակաւոր արուեստագէտ Պետրոս Ասլանեան: Նուիրատուն է տիկ. Շաքէ Կէօնճեան: Բարերարուհին խորհրդապատկերը նուիրեց Ս. Յակոբ եկեղեցւոյ՝ ի յուշ իր սիրեցեալ ամուսնոյն՝ Արմէն-Կարօ Կէօնճեանի: Հայոց ցեղասպանութենէն ետք հայութեան յարութիւնը վեր-յիշեցնող ստեղծագործութիւնը զետեղուեցաւ եկեղեցւոյ գաւիթին մէջ:

Լուսանկարը՝ Արմէն Ալէմեանի

ՀՅԴ Գանատայի Պատանեկան միութիւնները նշեցին արցախեան ազատամարտի 30-ամեակը

Մեր նախորդ հաղորդագրութեամբ (19 Փետրուար 2018), տեղեկացուցած էինք, որ ՀՅԴ Գանատայի Պատանեկան միութիւնները պիտի կազմակերպեն Փետրուարեան ազատամարտեան եւ Արցախեան ազատամարտի 30-ամեակին նուիրուած ձեռնարկներ: ՀՅԴ Գանատայի Պատանեկան միութիւններու Ընդհանուր Վարիչ մարմինը կը հաղորդէ հետեւեալը.

1. Կազմակերպութեամբ՝ ՀՅԴ ԳԵՄ-ի «Լեւոն Շանթ-Բեկոր Աշոտ» մասնաճիւղի եւ «Դրօ-Գետաշէն» Պատանեկան միութեան, Մոնթրէլի Հայ կեդրոնէն ներս նշուեցան զոյգ առիթները, 24 Փետրուար 2018-ին, շուրջ 300 հայորդիներու ներկայութեամբ: Կարելի եղաւ նաեւ հանգանակել Վանաձորի ճամբարին եւ 2019-ի Պատանեկանի Հայաստանազնացութեան կոկիկ գումար մը:

2. Հովանաւորութեամբ ՀՅԴ «Սիմոն Վրացեան» կոմիտէութեան եւ մասնակցութեամբ ՀՅԴ «Քրիստափոր Միքայէլեան» Պատանեկան միութեան, Վանաձորի Հայ կեդրոնին մէջ նշուեցան զոյգ առիթները, 25 Փետրուար 2018-ին: Պատանիները ներկաներուն հրամանատարներու փոխը մը յեղափոխական երգեր: Նախքան պաշտօնական արարողութիւնը, անոնք մատուցեցին ազատամարտիկներու ի յիշատակ հոգեճաշ:

3. Թորոնթոյի մէջ, կազմակերպութեամբ ՀՅԴ «Քրիստափոր» եւ «Ռոստոմ» Պատանեկան միութիւններուն, 13 Ապրիլ 2018-ին տեղի ունեցաւ ազգային, յեղափոխական եւ ժողովրդային երգերու երեկոյ, որուն ընթացքին ելոյթ ունեցաւ հայրենի սիրուած երգիչ Սեւակ Ամրոյեան: Պատանիները իրենց մասնակցութիւնը բերին կատարելով ձեռնարկի բացումը՝ քայլերգներու երգեցողութեամբ եւ խօսքով: Անոնք նաեւ յուզեցին ներկաները Սեւակի հետ «Աղբերս ու ես»-ի երգեցողութեամբ: Շուրջ 450 հայորդիներու ներկայութեամբ, կարելի եղաւ նաեւ հանգանակել 2019-ի Պատանեկանի Հայաստանազնացութեան կոկիկ գումար մը:

4. Դարձեալ Թորոնթոյի մէջ, կազմակերպութեամբ ՀՅԴ «Քրիստափոր» եւ «Ռոստոմ» Պատանեկան միութիւններուն եւ մասնակցութեամբ Քեմպրիճի «Վարդան» Պատանեկան միութեան, 27-29 Ապրիլի շաբաթավերջին, տեղի ունեցաւ սեմինար մը, որուն ընդհանուր թեման էր Արցախեան ազատագրական պայքարը: Պատանիները լսեցին Արցախեան ազատամարտի եւ ներկայ իրավիճակի մասին դասախօսութիւններ, զրուցեցին ազատամարտի մասնակցած ընկերներու հետ, իրազեկ դարձան այս օրերուն հայրենիքի մէջ տեղի ունեցող իրադարձութիւններուն, լսեցին ու երգեցին յեղափոխական երգեր եւ ունեցան մարզական եւ ընկերային պահեր:

Տարեշրջանի վերջին մեծ նախաձեռնութիւնը պիտի ըլլայ Մայիս 11-13 շաբաթավերջին տեղի ունենալիք Համազանատական Սեմինարը՝ Հայաստանի Ա. Անկախութեան 100-ամեակին նուիրուած, որուն մասին եւ 2019-ի Հայաստանազնացութեան նախապատրաստական աշխատանքներուն լայնօրէն կ'անդրադառնանք հետագային:

ՀՅԴ Գանատայի Պատանեկան Միութիւններու Ընդհ. Վարիչ մարմին

Voyages HAIG Travel
 Ձեր բոլոր ճամբորդական Կարիքներուն համար հեռաձայնել՝ (514) 284-7676
ՅԱՏՈՒԿ ԳԻՆԵՐ ԴԷՊԻ ՀԱՅԱՍՏԱՆ...
ԼԱՒՍԳՈՅՆ ՍՊԱՍԱՐԿՈՒԹԻՒՆ ԵՒ ՅԱՐՄԱՐԱԳՈՅՆ ԳԻՆԵՐ
 PERMIS DE QUÉBEC
 3438 Rue St-Denis, Montreal, QC H2X 3L3, Fax: 514-284-7677

Linda Kharaboyan Notaire Notary
 Ձեր նոտարական և իրաւաբանական հարցերն ու ծրագրերը վստահեցրէ մեզի
 Vos affaires. À cœur.
 Therrien Couture 3111, boul. Saint-Martin O., #500 Laval (Québec) H7T 0K2 t. 450 682.5514 - 855 633.6326 linda.kharaboyan@therriencouture.com therriencouture.com

VIZUALIS optométriste
 DR SHANT DONABEDIAN
 Centre d'Achat Fairview - Fairview Mall Pointe Claire
 514 695 2555 - VIZUALIS.CA

PHOTO Cristal (514) 744 4313
 Mariage - Portrait - Graduation
 Restauration - Commercial - Passeport
 Publicité - Lamination - Encadrement
 Video - Reproduction
 647 Boul. Decarie VSL-Montreal QC H4L 3L3 photocrystal@hotmail.com www.photocrystal.com

Assura Bien inc. Cabinet en assurance de dommages et de services financiers
 Ապահովագրական գրասենեակ
 KRİKOR ABRAKIAN VAHAN MATOSSIAN
 970 Montée de Liesse, suite 306, Saint-Laurent, Qc. H4T 1W7 T: 514.903.3999

RITA BAGHDASSARIAN Conseillère en Sécurité Financière Revenu Garantie Viager
 COMPTE D'ÉPARGNE LIBRE D'IMPÔT (CELL) • CRÉATION D'HÉRITAGE • REER, FERR RENTE RETRAITE • PLAN D'ÉDUCATION-REÉÉ • ASSURANCE-VIE & HYPOTHÉCAIRE • ASSURANCE SALAIRE & COLLECTIVE • ASSURANCE DE PARTENARIAT
 3820, boul. Lévesque Ouest, Bureau 101, Laval Qc. H7V 1E8
 Tél.: (450) 973-2822 • (514) 884-1117 • Fax: (450) 973-2262 ritabagh@yahoo.com

TAXI MIRABEL 450-430-2650
 Taxi Mirabel Հայկական հաստատութիւնը կարիքը ունի 20 հայ թարսի վարորդի Միրապիլ շրջանին մէջ: Հաճեցէք հեռաձայնել Արային (514) 979-1317 թիւին:
 Taxi Mirabel needs Mirabel area taxi drivers with pocket number, besoin de chauffeur de taxi. Call/Appelez: (514) 979 1317

RE/MAX RE/MAX 3000 inc. Agence immobilière
 Elie Berberian Courtier immobilier / Real Estate Broker
 C 514.519.3543 B 514.333.3000

ONGLES CAROLE HAMPARTSOUMIAN
 POSE D'ONGLES
 RÉSINE ET POUFRE
 MANICURE & PÉDICURE AVEC GEL
 RECOUVREMENT SUR ONGLES NATURELS
 Առողջ եղունգներու խնամքի համար հեռաձայնել՝ 514 941-0014 LAVAL

KRIKOR MAROUNIAN RLU Independent Financial Security Broker
 Life Insurance • Disability & Critical Illness Insurance
 Group Insurance • Pension Plans
 Travel/Visitor Medical Insurance
 11820 General Giraud Montreal, QC H4J 2H6 Res: (514) 332-7021 Fax: (514) 332-7376 Cell: (514) 927-2666 krikormar@gmail.com

FIVE STAR ELECTRIQUE CINQ ÉTOILES
 SPECIALIST IN DECORATIVE GARDEN LIGHTING RESIDENTIAL-COMMERCIAL
 BEDROS NALPATIAN
 442, LA RIVIÈRE, LAVAL, QC
 TEL: 514-497-5155 FAX: 450-689-3997 E-MAIL: ELECTRIC.FIVESTAR@GMAIL.COM

CENTUM Metrocorp Wealth Solutions Inc. Licence # 12147
 Mortgage programs for new comers to Canada
 New purchases
 Refinancing
 Second mortgages
 Self employed
 Low credit score
 Access to top lenders including private lenders
 416.662.6650 cell centum.ca/sosie_demersesian

ALINE BEKEREJIAN NOTAIRE - NOTARY
 180, rue Fleury ouest Montréal, Qc, H3L1T5
 T 514.382.7222 F 514.381.1818
 aline.b@notarius.net www.abnotaires.com
 Լոտար եւ իրաւաբանական խորհրդատու՝ Ալին Բեքերեճեան

Մոնթրեալի Ս. Յակոբ Ազգային վարժարանի «Վ. եւ Ա. Սարաֆեան» նախակրթարանի եւ «Բաստրման» երկրորդականի ճաշկերոյթին հանգանակուեցաւ 230,985 տոյար

Մոնթրեալի Ս. Յակոբ Ազգային վարժարանի տարեկան ճաշկերոյթը տեղի ունեցաւ 14 Ապրիլ 2018-ին, Հայ կեդրոնի ՀՄԸՄ-Կամք «Հայկ Մարգարեան» մարզասրահէն ներս, 300 ազգայիններու ներկայութեամբ: Երեկոն սկսաւ աւարտական դասարանէն հանդիսավարներ Ալինա Սեփեթեանի եւ Յովիկ Կէտիկեանի բարի գալուստի խօսքով, որուն յաջորդեց գեղարուեստական յայտագիր մը տիկին Դալար Հարպոյեան-Գալլօլեանի ղեկավարութեամբ: Նախակրթարանի հինգերորդ եւ վեցերորդ դասարաններէն խումբ մը աշակերտներ երգեցին եւ նուագեցին «Հայոց լեզուն», «Ղարաբաղ իմ», «Հայ արի զինուոր», հայկական մեղեդիներու շարան, սրինգի եւ շուրի վրայ եւ Արա Գէորգեանի «Սարգարայատ»ը՝ տնօրէն եւ այլ հարուածային գործիքներով: Ապա, Մարիամ Թովմասեան ասմուքեց Պարոյր Սեւակի «Քիչ ենք, բայց հայ ենք» բանաստեղծութիւնը, իսկ Լորիկ Կարապետ երգեց «Հայը հայ կը մնայ» ազգայնաշունչ երգը:

Գեղարուեստական բաժինէն ետք, Ս. Յակոբ եկեղեցւոյ Հոգաբարձութեան ատենապետ պրն. Գեորգ Օհանեան ներկայներէն խնդրեց մէկ վայրկեան յոտնկայս լուծութեամբ յարգել յիշատակը վարժարանի բարերարներէն նորոգ հանգուցեալ պրն. Արամ Մարգարեանի ու ապա շնորհակալութիւն յայտնեց բոլոր ներկաներուն եւ նուիրատուներուն իրենց սրտաբուխ եւ առատաձեռն նուիրատուութեանց համար, որոնք կ'օժանդակեն դպրոցի առաքելութեան անխափան ընթացքին: Գեղարուեստական յայտագրի աւարտին, Գանատայի Հայոց Թեմի Առաջնորդ Գերշ. Տ. Բարբէն Արքեպիսկոպոս Չարեանի կողմէ ճաշի սեղաններու օրհնութենէն ետք սպասարկուեցաւ ընթրիքը:

Ընթրիքի սպասարկութենէն ետք, պրն. Թորոս Պապիկեան դպրոցի Վարչական Խորհուրդին անունով խօսք առնելով հաստատեց, թէ հայ աշակերտը Սուրբ Յակոբ Ազգային վարժարանէն ներս կը ստանայ ուսման բարձր մակարդակ՝ հետեւելով Քեպէզ նահանգի կրթական նա-

խարարութեան ծրագրին, ինչպէս նաեւ կը ստանայ ազգային դաստիարակութիւն՝ հայաշունչ եւ ապահով միջավայրի մը մէջ: Ան ուրախութեամբ յայտարարեց նաեւ, որ բարերարներուն նուիրատուութեամբ նորոգուած են դպրոցի գանազան բաժինները, ինչպէս՝ միջանցքները, պահարանները, դասարանները, եւ այլն: Պրն. Պապիկեան նաեւ հպարտութեամբ նշեց, թէ շրջանաւարտներու թիւը այս տարի պիտի հասնի 997-ի:

Պրն. Պապիկեան անդրադարձաւ վարժարանի ընդհանուր անօրէնուհի տիկ. Լենա Գատեանի կտրած մասնագիտական ուղիին, ինչպէս նաեւ Օնթարիոյ եւ Քեպէզ նահանգներու մանկավարժական ու կրթական ոլորտէն ներս անոր ձեռքբերումներուն եւ մրցանակներուն: Ան շնչեց, որ վարժարանէն ներս տիկին Գատեան իր եօթնամեայ գործունէութեան ընթացքին միշտ առաջնահերթ նկատած է հայ աշակերտին յաջողութիւնը, սուրբահայ 200 աշակերտներու ընդունումն ու անոնց կարիքներու ապահովումը, ինչպէս նաեւ հայկական ոգին վառ պահելու անհրաժեշտութիւնը, որուն մէկ արտայայտութիւնն է արուեստագիտուհի Նուշիկ Գատեանի կողմէ հայկական ոգին ճառագայթող որմնանակարի պատրաստութիւնը 40 աշակերտներու մասնակցութեամբ: Ապա, պրն. Պապիկեանն ու պրն. Օհանեանը տիկին. Գատեանին յանձնեցին յիշատակի նուէր մը ու յայտարարեցին, թէ տէր եւ տիկին Կարօ եւ Լենա Գատեանները 10,000 տոյար կը նուիրեն վարժարանի, տիկին Գատեանին հանգստեան կոչուելուն առիթով:

Երեկոյի ընթացքին խօսք առաւ տիկ. Լենա Գատեան՝ ֆրանսերէնով եւ հայերէնով: Ան իր խօսքին ընթացքին գնահատեց Ս. Յակոբ Ազգային վարժարանի ուսուցիչներու նուիրական աշխատանքը, որ կը միտի ապահովել իւրաքանչիւր աշակերտի բարեկեցութիւնն ու յաջողութիւնը: Ան շնորհակալութիւն յայտնեց նաեւ տնօրէնութեան նախկին եւ ներկայ անդամներուն՝ տիկին Յովիկեանի, տիկին Ժօզէ Ֆօնդէնի եւ օրդ. Լորի Ապրաքեանին: Տիկին Գատ-



եանը ընդարձակօրէն ներկայացուց նաեւ վերջին 7 տարուան ընթացքին դպրոցէն ներս կատարուած աշխատանքները, որոնք կ'առնչուին աշակերտներուն վարքագծային կանոններու հաստատման, դպրոցին փոխանցած արժէքներու յատակացման, որոնք կ'ամփոփուին հետեւեալ չորս կէտերուն մէջ՝ յարգանք, պատասխանատուութիւն, համագործակցութիւն եւ յարատեւում: Տիկ. Գատեանը նաեւ երախտագիտութեամբ յիշեց Մոնթրեալի յանձնախումբի տարած անձնուէր աշխատանքը, ինչպէս նաեւ այն բոլոր օժանդակութիւնները, որոնք ցուցաբերուած են դժուարութիւն ունեցող աշակերտներուն հանդէպ, որպէսզի անոնք հեզասահօրէն կարենան իրենց երկրորդական ուսումը աւարտել: Տնօրէնուհին գոհունակութեամբ արտայայտուեցաւ նահանգային մրցումներու ընթացքին աշակերտներուն արձանագրած յաջողութիւններուն եւ ձեռք բերած մրցանակներուն եւ իր խօսքը աւարտեց ըսելով. «Շնորհակալութիւն կ'ուզեմ յայտնել մեր դպրոցը այցելած բոլոր հիւրերուն, դպրոցէն ներս կազմակերպուած բոլոր ոգեկոչումներուն եւ տօնակատարութիւններուն համար, որոնք ոգեշնչեցին զիս: Սրտանց շնորհակալութիւն կը յայտնեմ պրն. Մհեր Գարաբաշեանին եւ բոլոր հայերէնի դասատուներուն, որոնք թոյլ տուին, որ հայկական շունչով ապրիմ, զգամ հայրենիքի քաղցրութիւնը այս օտար ափերուն վրայ եւ ժառանգած արիւնիս ջերմ շրջանառութիւնը հայ տնօրէնի երակներու մէջ, այս վերջին 7 տարիներուն ընթացքին: Վարձքերնիդ կատար սիրելի հայ գործակիցներ, ինձի համար հաճոյք

էր թիկունք կանգնել ձեր ձեռնարկներուն եւ գնահատել զանոնք»: Վերջապէս, տնօրէնուհին ըսաւ. «Կը վերջացնեմ խօսքս: Վերջին ակնարկս դարձնելով իմ սրտիս մօտ մէկ յիշատակին, երբ Սրբազան Հայրը իր այցելութեան ընթացքին օրհնեց հացը եւ աղը»:

Տիկին Գատեան, իր սրտի խօսքէն ետք, անձնակազմին անունով շնորհակալութիւն յայտնեց 27 տարուան ֆրանսերէն լեզուի եւ գրականութեան ուսուցչուհի տիկին Պելլա Ուրֆայեանին, ինչպէս նաեւ 30 տարուան հայերէնի եւ գրականութեան ուսուցիչ պրն. Յարութիւն Պէրպէրեանին, վարժարանէն ներս իրենց բերած ներդրումին եւ անձնուէր աշխատանքին համար: Տիկին Պելլան եւ պրն. Յարութիւնը հանգստեան կը կոչուին ուսումնական շրջանի աւարտին, իրենց հետ տանելով պտղաբեր ասպարէզի մը անմոռանալի յիշատակները:

Տիկին Գատեանի խօսքէն ետք, Ս. Յակոբ վարժարանի նախկին շրջանաւարտ տիկին Թալին Մինոյեան խօսք առնելով շնորհակալութիւն յայտնեց տնօրէնուհիին անկիւնադարձային տարիներու ընթացքին դպրոցին բերած իր նպաստին համար, ինչպէս նաեւ իր ուսուցիչներուն ըսելով. «Հայկական դպրոցին գործը սուրբ է, հպարտ եմ շրջանաւարտ ըլլալուս եւ Ս. Յակոբին կը պարտիմ հայ ընտանիք եւ զաւակներ ունենալս: Ս. Յակոբը միայն դպրոց չէ, միայն տուն չէ, միայն ապահովութիւն չէ, Ս. Յակոբէն աւարտողները կը դառնան գլխադիր ե՛ւ մարդ, ե՛ւ յաջողած անձնաւորութիւններ»: Ան խօսքը ուղ-

ՃՄԾԿԵՐՈՅԹ... Ծար. էջ 9

Ghadir Meat & Restaurant
 T. 416-750-7404
 T. 416-750-7400
 1848 Lawrence Avenue E.
 Scarborough, ON M1R 2Y4
 E-mail: info@ghadirmeatmarket.com

BAKERY AND FINE FOODS
 OPEN 7 DAYS A WEEK!
 WEEKDAYS 9am - 7pm
 SATURDAY 6AM - 6PM
 SUNDAY 9AM - 3PM
LOCATION: 2094 LAWRENCE AVENUE EAST
 ON THE NORTH-EAST CORNER OF LAWRENCE AND WARDEN

Noor Fine Food
 Gourmet Mediterranean Cuisine
 1 High Meadow Place, Unit 9
 Toronto, Ontario M9L 2Z5
 Tel 416 745 3111
 Fax 416 745 9337

ANI Restaurant
 905.761.6484
 1450 Clark Ave. West,
 Thornhill ON L4J 7R5

Sutton
 Sutton Group-Admiral Realty Inc., Brokerage
 1206 Centre Street, Thornhill, Ontario L4J 3M0
Annie Varbedian
 Sales Representative
 Direct: (416) 918-3615
 Office: (416) 739-7200
 Fax: (416) 739-9367
 annievarbed@hotm.com
 www.suttongroupadmiral.com

hearing aid source
Andre Ayvazyan HIS B.A.S.
 andre@HearingAidSource.ca
 416 754 4327 (HEAR)
 Parkway Mall, 85 Ellesmere Rd., #65, Toronto, ON, M1R 4B9

TASTE OF ALEPPO
Crown Pastries
 Fine Middle Eastern Pastries
 2086 Lawrence Ave East (Lawrence & Warden)
 Toronto ON, M1R 2Z5
 Tel 647.351.2015
 www.crownpastriesbaklava.com

I.D.A.
 Part of the **Royal** family of pharmacies.
Cassandra Pharmacy Inc.
 2040 Victoria Park Ave.
 Toronto, Ontario
 M1R 1V2
 Pharmacists
Sarkis Balian
Vartan Balian
Maral Abdalian Balian
 Tel. : 416.449.2040
 Fax: 416.449.2048

ANI BAKERY
 ԱՆԻ ՓՈԱՊԱՆ
Middle Eastern Pizza
Lahmajoun
ARSEN DABBAGHIAN
 25 Howden Road, Unit #2
 Scarborough, Ontario M1R 3C8
 Tel: 416.285.7164

Տաճկահայ Գաղթաշարժը Եւ Անոնց Դերը Հայաստանի Հանրապետութեան Կազմութեան Մէջ - ԺԴ.

Գլուխ Զորորդ 1916
Մուշ-Սասուն, Էրզրում-Տրապիզոն 1.

1916-ի Յունիստանի Կովկասեան ռազմաճակատի գլխաւոր ուժերը յարձակողականի սկսանՊուրքիոյ դէմ եւ մէկ ու կէս ամսուայ ընթացքին, կրցան ջախջախիչ հարուած իջեցնել թրքական բանակներուն: Իրարու ետեւէ գրաւեցին Էրզրումը, Տրապիզոնը եւ Երզնկան: Ռուսական բանակի միւս թեւերը նոյն արագութեամբ ու խիզախութեամբ ինչպէս առաջացան Խնուս, անկէ ալ յարձակողականով մը տէր դարձան Վարդոյին-Քղիին, Մշոյ դաշտին, Մուշին եւ Սասունի առաջին լեռնաշղթային: Բուլանուխ-Մալազկերտէն, ինչպէս նաեւ Արճէշ-Ախլաթէն ուրիշ զօրասիւն մը յանդուգն յարձակողականով մը կը մտնէր Բիթլիզ: Այսպիսով ռուսական բանակը կ'երթար ամրանալու Սեւ ծովու եզերքը, Պոնտոսն իր թեւարկութեան տակ առնելով. ու ուղիղ գծով վար կ'իջնէր Երզնկա, մինչեւ Դերսիմի լեռնաշղթան. աւելի հարաւ կը հանգչէր Եփրատի հովիտը, ու անոր հունով կ'առաջանար մինչեւ Սասնոյ լեռնաշղթան, Բիթլիզի հարաւով մինչեւ Վանի Շատախները, ու կը կախուէր Մուսուլի գլխին, Հայկական նահանգներն իր տիրապետութեան տակ առնելով:

Այն ինչ որ կը բաղձայինք ու կ'երազէինք 1914-ի պատերազմի առաջի օրերուն, տեղի ունեցաւ միայն 1916-ի ձմեռուայ եւ գարնան ամիսներուն: Մենք տէր էինք մեր պահանջած Հայաստանին, սակայն հայ ժողովուրդի մեծ մասը կոտորուած ու տեղահանուած էր՝ անապատի հովերուն ցրուելու համար: Շէն Վանն իսկ տակաւին չէր վերականգնած. հոն բաւական թուով տղամարդիկ միայն վերադարձած էին: 1916-ի յաջող յարձակողականներէն յետոյ էր, որ հետզհետէ ժողովուրդի մէկ մասը վերահաստատուեցաւ Վանի նահանգի մէջ, ու կենդանութիւն տուաւ անոր:

Հայ կամաւորական գունդերը 1915-ի Վանի մեծ նահանջէն յետոյ նորէն վերակազմուեցան. իրենց շարքերը լրացուցին եւ իրենց մասնակցութիւնը բերին ռուսական ընդհանուր յարձակողականին:

Դրոյի գունդը Ալաշկերտէն առաջացաւ Խնուս եւ առանց սպասելու, առաջին զօրամասն եղաւ որ մտաւ Մուշ եւ մագլցեց Սասուն. Անդրանիկի գունդը հերոսական կուռով մը կը մտնէր Բիթլիզ քաղաքը: Համագաստի գունդը նոյնպէս կը գործէր Բիթլիզի ուղղութեամբ եւ դիրք կը բռնէր Բիթլիզի Գիւզէլտէրէն: Քեռու եւ Իշխանի գունդերը կը գործէին Վանի նահանգի եւ Պարսկաստանի սահմանին վրայ: Հայկական վեցերորդ գունդը մըն ալ կար, որ կապուած չէր Ազգ. Բիւրոյի հետ. սակայն ռուսական բանակի արտօնութեամբ կազմակերպուած էր, որու ղեկավարն էր Զանթօլատը: Այդ գունդը մշտապէս մնաց դէպի Էրզրում գործող ռուսական զօրամասին հետ, եւ լուծուեցաւ ընդհանուր կարգով:

Հայկական զօրական ուժերը, այսպիսով, իրենց գերագոյն տուրքը կուտային Հայաստանի վերջնական սահմանները գրաւելու պատերազմական գործողութիւններու ընթացքին, ու սրտաբեկ կը դիմէին դէպի իրենց սիրելի հայրենի սարերն ու ձորերը, ուր միայն բեկորներ կը գտնէին ի գին իրենց քամած արիւնին:

Հայաստանի ամբողջական գրաւումէն յետոյ էր, որ մենք կրցանք լիովին ըմբռնել ու չափել այն ահուկի գործը, որ թրքական ոճրագործ կառավարութիւնը մտածած ու գործադրած էր: Յուսալքումը որ տիրական դարձած էր Վանի եւ Մալազկերտի նահանջէն յետոյ, ձմեռուայ ամիսներուն, աւելի քան ճնշիչ կը դառնար կոտորածի եւ տեղահանութեան լուրերով: Հայ ժողովուրդը կծկուած իր ոգիի խորքին մէջ, վախով կ'երեւակայէր, իրմէ դուրս, թուրքիոյ մէջ գտնուած հայութեան ամբողջական կորուստը: 1916-ին ռուսական յաղթութիւնը մեզ կը փոխադրէր մեր դատարկուած հայրենիքը: Մեր երեւակայական վախն ու ցուրտ իրականութիւնն իրար կը գրկէին:

Այդ ահուկի իրականութեան առջեւ ցնցուած, պահ մը կը շուարէինք: Սակայն բեկորները կը շատնային: Հայրենի լեռներէն, ու ձորերէն, հեռու սահմաններէն, Դերսիմէն, Սասունէն, Խարբերդէն ու Տրապիզոնի շրջաններէն երբեմն ժողովրդական զանգուածներ, երբեմն խումբեր, երբեմն մէկ մէկ կիւն, մարդ, կամ տղեկ, կուգային ու կ'աւելնային, ժողովրդական զանգ-

ուած մը կը կազմէին Մշոյ, Բիթլիզի, Քղիի եւ Երզնկայի մէջ: Այս սփոփանքէն զատ, այլեւս կը գալայինք որ հաստատուն կերպով ամրացած ենք մեր հայրենիքի մէջ, ու կարելի պիտի ըլլայ աւերակներու տակէն, կանգնեցնել մեր շէն օճախը:

Յուսալքումը կամաց կամաց տեղի կուտար յուսատու լոյսին, ո՛ր ինքնահամոզման ու ճիգի արդիւնք էր. պարզ ինքնապաշտպանութեան բնագոյն:

2.

Այժմ տեսնենք թէ ինչպէ՞ս գրաւուած Տաճկահայաստանը կը ծածկուէր հայրենի ծուխերով:

Կամաւորական բանակը Մուշ հասնելէն քանի մ'օր յետոյ, Սասնոյ տակաւին ձիւնածածկ լեռներէն վար կ'իջնէին մօտ 300 զինուած մարդիկ, անասելի պատմութիւններ բերելով իրենց հետ: Մենք որ կը կարծէինք թէ ոչ մէկ շունչ մնացած էր այդ կողմերը, ահանատեա կ'ըլլայինք կիսամերկ հսկաներու, որոնք գազան մարդկութեան դէմ կուռելէ զատ, կուռած էին իրական գազաններու եւ բնութեան արհաւիրքներու դէմ, ու թէեւ քիչ մը վայրենացած կերպարանքով՝ սակայն Նոյնահայեանի մը յաղթական ու պայծառ ճակատով՝ կը ներկայանային մեզ: Նոր հասնողներու շարանը կը շատնար: Անոնք կուգային Տալուրիկէն, Խիանքէն, Խուլբէն, Հազոյէն ու Սասնոյ զանազան կողմերէն:


Ասոնց բացարձակ մեծամասնութիւնը կտրիճ տղամարդիկ էին, որոնք Մուշ հասնելու առաջին օրն իսկ, հացէն ու հագուստէն առաջ, գէնք կը պահանջէին: Այդ օրերուն, բարեբախտաբար Զօր. Նազարէգեանը Մուշ կը գտնուէր, ու Դրոյի եւ Անդրանիկի միջնորդութեամբ, որոշ քանակութեամբ գէնք կը սրամազրէր նորագատ լեռնականներուն, որոնք Սասունցի Մանուկի եւ այլ ղեկավարներու առաջնորդութեամբ անմիջապէս կը մեկնէին Սասնոյ խաւարակուռ անկիւնը, Խոյթ-Բռնաշէն: Սա հին Սասունն է. ուր քիւրդն ու հայը կրցած էին մասամբ իրարու գոյութիւնը տանիլ, ու չբնաջնջուիլ: Այդ արշաւանքի շնորհիւ անվնաս հայութիւն մը, հարկերով ու հազարով կարուան կազմած, կ'ազատուէր ու կուգար տեղաւորուիլ Մուշ քաղաքը եւ շրջակաները:

Մօտրգանէն, որ Սասնոյ այդ շրջանին կը պատկանէր ու կը գտնուէր մօտիկ Բիթլիզ քաղաքին, մեզի բարեկամ քիւրդ ղեկավարներու առաջնորդութեամբ բազմաթիւ հայեր կուգային ու կը կեդրոնանային Բիթլիզ, անկէ ալ կը տարածուէին Մալազկերտի շրջանը, տեղաւորուելու եւ սնանելու համար: Մուրատ Սեպուհ եւ Սմբատ կը գտնուէին Բիթլիզ, եւ ամէն ջանք ու նիւթական զոհողութիւն կ'ընէին, որպէսզի քիւրդտեր անվնաս բերէին իրենց քով ապաստանած հայերը մինչեւ ազատութեան գօտին: Այդ օրերուն էր որ Մուրատ կիւ մը հրատարակեց Կովկասի Հայ թերթերուն մէջ, Մէկ ՀԱՅ Մէկ ՈՍԿԻՒ Ֆօնտ մը կազմելու, եւ այդ դրամով հայեր ազատելու զանազան շրջաններէն: Այդ ֆօնտը կազմուեցաւ, ու գործադրուեցաւ Բիթլիզի, Մուշի եւ Դերսիմի գծերուն վրայ: Սակայն այդ ֆօնտէն աւելի, զինուորական ու հետախուզական խումբերու շնորհիւ էր որ շատ մարդիկ ազատուեցան... առանց սպասելու ոսկիներու հաւաքման: Այդ ժամանակաշրջանը կարող ենք կոչել ազգահաւաքման շրջան:

Յուսակազմութիւն մը որ կազմուած էր 1916ի յունիս ամսուն, ցոյց կուտար որ մէկ քանի ամիսներու ընթացքին ազատուած էին բուն կուռուղ Սասունէն եւ շրջականերէն 2400 հոգի. իսկ Խոյթ-Բռնաշէնէն եւ Մօտրգանէն մօտ 11,000 հոգի: Այդ գծերէն եկած ժողովուրդի մէջ կային շատ քիչ թուով Մուշ քաղաքէն, Մշոյ դաշտէն եւ Տրապիզոնի շրջանէն բեկորներ, որոնց ամբողջութիւնը 4-500 հոգի կը հասնէր:

Երզնկա-Դերսիմ գծով բաւական երկար ժամանակ աշխատանք կատարուեցաւ, ու ազատուեցան հազարաւոր մարդիկ: Ազատուողներու քանակի մասին ճշգրիտ տույցակներ չունին, հոս արձանագրելու համար: Սակայն մօտաւոր կերպով կարող ենք ըսել որ այդ գծով 20,000-էն աւելի մարդ ազատուած է:

Թրքական գծերէն ազատուածները շունչ կ'առնէին պատերազմական վայրերու անմիջական մօտակայքը, եւ դուրք կը տեսնէիք թէ ի՞նչպէս աւերուած քաղաքներն ու գիւղերը կենդանութիւն կ'առնէին, նոր բոյներ կը դառնային: Այս հոսանքը հետզհետէ նուազեցաւ, բայց չցամաքեցաւ: Բարակ աղբիւրի մը պէս միշտ հոսեցաւ, ու մեզ բերեց մանուկ մը, կիւն մը, մարդ



մը, որ կուգար ու կը հանդիպէր եղբայրական օգնութեան ու գուրգուրանքի, եւ ծուխ մը կ'աւելցնէր մեր նոսրացած ժողովրդի վրայ:

Միւս կողմէ կը սկսէր ներգաղթը Կովկասէն դէպի գրաւուած վայրերը: Բասէնն ու Ալաշկերտը հաստատուն մնացած էին ու երկու շէն կամուրջներ կը դառնային ներգաղթի համար: Վանեցիներու մէկ մասը կը դիմէր դէպի Վան: Բուլանուխ Մալազկերտի ժողովրդի մեծ մասը կը հաստատուէր իր գիւղերու մէջ: Խնուսցիներն ու Մշոյ դաշտի ազատուածները կը փութային շօշափելու իրենց փլատակները ու տնակէ մը ծուխ կը հանէին, որպէս խնկարկէք իրենց անթաղ մեռելներուն:

Այսպէս, թէեւ ցան ու ցրիւ, սակայն Վանէն Արճէշ, Մալազկերտէն Բիթլիզ, Մուշէն մինչեւ Խնուս, Երզնկայէն մինչեւ Էրզրում հայրենի երդիքէն սկսած էր ծուխ բարձրանալ:

Պատերազմական գործողութիւններուն զուգընթաց հայ հասարակական հաստատութիւնները թուցիկ խմբեր անմիջապէս ճանապարհ հանած էին, անմիջական օգնութեան գործը կազմակերպելու համար: Զօրքերու ժամանումէն քիչ յետոյ Խնուս եւ Մուշ հասած էին Վ. Քրմոյեան, Տ. Զօրեան, Աբոյեան եւ ուրիշներ, ու լծուած էին գաղթականական գործին: Վան մեկնած էր Գոստի Համբարձումեանը Քաղաքներու Միութեան, իսկ Գ. Օհանջանեանը Հայոց Բարեգ. Ընկերութեան կողմէ: Էրզրումի շրջանի մէջ կը գործէին Քաղաքներու Միութիւնը, Հայոց Բարեգործական Ընկերութիւնը եւ Մոսկուայի Հայկական Կոմիտէն:

Հայոց Բարեգործական Ընկերութեան, Գաղթականական Կ. Կոմիտէի եւ Էջմիածնի Եղբայրական Միութեան կողմէ Խնուսի եւ Մուշի շրջանին օգնութիւն հասցնելու համար կազմակերպեցին մարմին մը, որ մարտի սկիզբներուն, իմ ղեկավարութեամբ մեկնեց Խնուս եւ Մուշ: Այս մարմինն կը մասնակցէին Մ. Տէր Գէորգեան, Մ. Դարեանեան, Արմէն Սասունի, Հ. Մալաքեան Սասունցի Մանուկ եւ ուրիշներ: Քաղաքներու Միութեան կողմէ Խնուսի եւ Մշոյ մէջ Յ. Ամատունի, Տոթթ. Ա. Պողոսեան, Տոթթ. Միխայեան, Սասունցի Մուշեցի, եւ ուրիշ բազմաթիւ գործիչներ, բժիշկներ եւ սանիտարական խմբեր:

Այսպիսով գաղթականական օգնութեան մարմիններու եւ գործիչներու ցանց մը կը կազմակերպուէր Էրզրումէն մինչեւ Խնուս-Մուշ, մինչեւ Վան: Եթէ շարք մը տեղեր գործը կը սահմանափակուէր միայն որբերու ու անօգնական ժողովուրդին խնամելու աշխատանքով, մնացած գլխաւոր վայրերու մէջ, ինչպէս Խնուս, Մուշ Մալազկերտ եւ Վան, միայն օգնութեան գործը չէր որ կը կանխէր մեր ամբողջ աշխատանքը, այլ նաեւ ժողովրդական հասարակական եւ գիւնական կեանքն էր որ իր վրայ կը կեդրոնացնէր մեր գլխաւոր ուղղութիւնը: Նոր գրաւուած Հայաստանի կենդանութիւնը գաղթականներով գլուխ չէր կարող պար: Յիշեալ վայրերու մէջ, գաղթականութեան տեղաւորման ու գիւղական կազմակերպութեան գործն էր որ արագ առաջ կը տարուէր, վարչական կերպարանք կը ստանար, քիչ մը նմանելու Բասէնի եւ Ալաշկերտի նախօրք կազմակերպուած շրջաններու:

Ասով հանդերձ, պէտք է խոստովանիլ որ Տարօնի այս գաւառներու եւ Վասպուրականի մէջ մենք կը դիմաւորէինք աւելի՛ կորովի, աւելի՛ կազմակերպուած ու աւելի՛ նախաձեռնող հայ ժողովուրդ մը, որ քաղաքական ու զինուորական դիմագիծ ունէր, քան օգնութեան կարօտ գաղթականական բազմութիւն մը, որ մեծ մասով կիւներէ եւ որբերէ բաղկացած էր:


Ռուսական տիրապետութիւնը իր ցարական կնիքը կը դնէր ամէնուրեք: Ու մենք ստիպուած էինք գերազանցապէս ծածկուիլ գաղթականական դիմակի տակ. ու օգնութեան հետ զուգընթաց, մեծ մասամբ գաղտնի, տանիլ վարչական, քաղաքական եւ ինքնապաշտպանական աշխատանքները:

ԿԱՌՕ ՍԱՍՈՒՆԻ



ՌԻՄՍԱԻՌՐԻՉ

ԿԵՂԵՑԻՆ ՏԱՆ ՄԷՋ



ԱՌԱՋՆՈՐԴԻ ԽՕՍՔ

ՎԵՐԱՆՈՐՈԳՈՒԹԵԱՆ ԽՈՐՀՈՒՐԴԸ

ԴԱՍԵՐ՝ ՃՇՄԱՐԻՏ ԶՐԻՍՏՈՆԷԱԿԱՆ ԿԵԱՆՔ ԱՊՐԵՆՈՒ ՀԱՄԱՐ



Բ. ՏԱՐԻ ԹԻԻ 6
ՄԱՅԻՍ
 MAY | MAI
 Year 2 | Année 2
 No. 6 - 2018



ԲԱԲԳԵՆ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ Առաջնորդ՝ Գանատայի Հայոց Թեմի

Ս. Յարութեան տօնէն մինչեւ Հոգեգալուստ, բոլոր օրերը Յինանց օրեր կը կոչուին, եւ իւրաքանչիւր Կիրակի յատուկ անունով մըն է յայտնի: Այնպէս ինչպէս Ս. Զատիկի տօնէն առաջ ունինք յիսուն օրերու ապաշխարութեան շրջան մը՝ նախապատրաստուելու քրիստոնէութեան յաղթանակի մեծագոյն տօնին, այնպէս ալ Ս. Զատիկէն յետոյ ունինք յիսուն օրերու հոգեւոր ուրախութեան շրջան մը, որ ինքնին շարունակութիւնն է Ս. Յարութեան խորհուրդի յաղթանակին ու վայելքին:

Անդրադառնանք Ս. Յարութեան յաջորդ Կիրակի օրուայ մասին. Արեւելեան եկեղեցիները զայն կոչած են «ՆՈՐ ԿԻՐԱԿԻ». Արեւմտեան եկեղեցին զայն կը կոչէ «ՄՊԻՏԱԿ ԿԻՐԱԿԻ», իսկ Հայաստանեայց Առաքելական Սուրբ Եկեղեցին «ԿԻՐԱՍՏԱՏԻԿ», որովհետեւ կը կրկնուին Ս. Զատիկուան ուրախութիւնները, եւ կը տիրէ այդ խորհուրդին յատուկ հոգեւոր խանդավառութեան մթնոլորտը:

Եթէ Նոր Կիրակիի շարականները ուսումնասիրենք, կը տեսնենք, որ այնտեղ կը շեշտուի ՎԵՐԱՆՈՐՈԳՈՒԹԵԱՆ ԽՈՐՀՈՒՐԴԸ: Այնպէս ինչպէս բնութեան մէջ վերանորոգութիւնը կարելոր է, նոյնքան կարելոր է մարդկային կեանքի վերանորոգութիւնը: Գարնան, բնութեան մէջ ամէն ինչ կը վերակենդանանայ. ծառերը կը ծաղկին, դաշտերը կը կանաչապատուին, թռչունները վերստին կը լեցնեն բնութիւնը իրենց ճռուողիւններով: Այս բոլորը կարելոր են նաեւ մարդկային ներքին կեանքի վերանորոգութեան համար: Մեր հաւատքը, սերը եւ բոլոր տեսակի գաղափարները, որոնք կը ձեւաւորեն մեր ներքին կեանքը, փշտ պէտք ունին նոր աւիշի, նոր լոյսի ու անձրեւի: Այդ մշտանոր լոյսը, յաւիտենական լոյսը Քրիստոս Ինքն է մեր կեանքի գերագոյն Վերանորոգիչը: Յիսուս վերանորոգեց Հին Ուխտը եւ Նոր Ուխտ հաստատեց, Իր իսկ կեանքով, արեամբ դրոշմուած: Առաքելները եւս ոգեւորուած՝ նորոգուած Քրիստոսի քարոզութեամբ, յարութեամբ եւ Սուրբ Հոգիին ներգործութեամբ, այդ նոյն վերանորոգութիւնն է որ թելադրեցին նաեւ մեզի՝ իւրաքանչիւր հաւատացեալի:

Ողոս Առաքեալ իր նամակներուն մէջ կը շեշտէ «Նոր մարդ», «Նոր արարած» ըլլալու անհրաժեշտութիւնը. «Հեռո՛ւ վանեցէք ձեզմէ հին մարդը իր նախկին կենցաղով, այն որ ապականուած է խաբուսիկ ցանկութիւններով: Նորոգուեցէք ձեր մտքով եւ հոգիով ու հագեք նոր մարդը, որ ստեղծուած է Աստուծոյ արդարութեամբ եւ ճշմարիտ սրբութեամբ» (Եփ 4.22-25): Իսկ ուրիշ տեղ մը կ'ըսէ. «...Թէպէտեւ մեր այս արտաքին մարդը կը քայքայուի, բայց ներքին մարդը կը նորոգուի օր ըստ օրէ» (Բ.Կր 4.16):

Քրիստոնէական այս վերանորոգիչ խորհուրդին է յատկացուած Նոր Կիրակին կամ Կրկնագատիկը:

Այո՛, այսօր եւս մարդը կարիք ունի ՎԵՐԱՆՈՐՈԳՈՒԹԵԱՆ՝ դուրս գալու մեղքի եւ մահուան հնութենէն:



ՆԱԽԱՆՁ ԵՒ ՄՐՑԱԿՑՈՒԹԻՒՆ ԶՈՒՆԵՆԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Երանի՛ անոր, որ նախանձի եւ մրցակցութեան ենթակայ չէ, որովհետեւ մրցակցութիւնն ու նախանձը իրարմով կ'ապրին: Արդարեւ, երանելի է այն մարդը, որ նման կացութեան մէջ չի գտնուիր: Որովհետեւ իր եղբոր հետ անարդարացիօրէն մրցակցողը կը դատապարտուի սատանայի հետ:

Ով որ կը մրցակցի, ան պարտուած է, անոր մէջ նաեւ թշնամութիւն կայ, զինք կը տանջէ ուրիշներուն յաջողութիւնը: Իսկ նախանձ եւ մրցակցութիւն չունեցողին ուրիշներուն յաջողութիւնը չի տխրեցնէր: Երբ ուրիշին պատիւի կ'արժանացնեն, ան խռովքի չ'ենթարկուիր: Երբ ուրիշը կը մեծարուի, ան չ'անհանգստանար, որովհետեւ բոլորը իրմէ աւելի գերադաս կը նկատէ, ինքն իրեն բոլորէն աւելի անարդարն ու յետինը կը համարէ, եւ բոլորը իրմէ աւելի վեր կը դասէ, իրմէ աւելի լաւը կը համարէ:

Նախանձ չունեցողը պատուի ձգտում չ'ունենար, ուրախացողներուն հետ կ'ուրախանայ, իրեն փառաւոր գործեր չի վերագրէր, յաջողակներուն կ'օգնէ, հաճոյքով կը նայի բարի ուղիով ընթացողներուն, կը գովաբանէ բոլոր անոնք, որոնք կ'ապրին ինչպէս որ հարկն է...:

Ամփոփելով, իր մէջ նախանձ եւ մրցակցութիւն չունեցողը ոչ մէկ գործի մէջ իր մերձաւորը ծաղր ու ծանակի առարկայ չի դարձնէր, ընդհակառակը, աննախանձ մարդը կ'ուրախանայ իր ընկերոջ բոլոր յաջողութիւններուն եւ անձնուէր աշխատանքներուն համար:

Եփրեմ Ասորի

ՃԻՇՏՈՒ ԳԻՏԱՍԱՔ Ի՞Նչ է Քշոցը

Քշոցը՝ Քրիստոնէութեան սկզբնական շրջանին, երբ Եկեղեցին հալածանքի կ'ենթարկուէր քրիստոնէաները պատարագները գետնադամբաններու կամ գաղտնի վայրերու մէջ կը կատարէին. բնականօրէն այդ խոնար վայրերուն մէջ ճանձեր ու միջատներ կը մօտենային զինիին եւ նշխարին, որոնք կ'օգտաործուէին Ս. Հաղորդութեան պատրաստման համար: Այդ միջատները հեռացնելու համար, սերովբէներու տեսքով հովա-հարներով, սարկաւագները պատարագիչ քահանայի կողքին կանգնելով՝ սրբագործեալ ընծաներու վրայէն կը քշէին զանոնք, եւ որպէս սերովբէներ՝ կը պահպանէին սրբութիւնը: Մակայն այդ սկզբնական կիրառութիւնն ու նշանակութիւնը շատոնց փոխուած է:

Այսօր քշոցները մետաղէ կլոր նուագարաններու վերածուած են, անոնց շուրջը փոքր բոժոժներ ամրացուած են. երկու երեսներու վրայ պատկերուած եւ քանդակուած են վեցթեւեան սերովբէներ, փայտէ երկար գաւազաններու վրայ գետնադամբ անոնց գործածութիւնը դիրացնելու համար: Հետեւաբար, անոնք այլեւս որպէս նուագարան կը գործածուին աւելի քան քշոց, որոնք որոշ խորհրդաւորութիւն կը յառաջացնեն Ս. Պատարագի երգեցողութեան ընթացքին՝ իրենց ներդաշնակ ու մեղմանոյ ինչիւններով:

Քշոցի պաշտօնեան դպիրն է:



ՈՒՍԱՒՈՐԻՉ

ՀՈԳԵՒՈՐ ՄՏՈՐՈՒՄՆԵՐ



ԲՐԻՍՏՈՒՄԵՆԱԿԱՆ

«Այս խօսքը ճշմարիտ է եւ կ'ուզեմ որ ասոնք հաստատես, որպէս զի Աստուծոյ հաւատացողները աշխատին բարի գործեր կատարել: Ասոնք են բարի ու մարդոց օգտակար բաները» (Տտ 3.8):

Կեանքի մեջ կան այնպիսի արժեքներ, որոնք սակայն 2024-ի հասկացողութեամբ յայտնի չեն կրնար ըլլալ, այլ անոնք աներեւելի են եւ բառերու մէջ խորհրդագրուած, ինչպէս հաւատք, սէր, բարութիւն եւ շարունակաբար: Հաւատքը այն բառերէն մէկն է, որ վերացական բառ մըն է, որ իմաստ ու արժէք կը ստանայ երբ այդ զայն ապրինք ու գործադրենք մեր կեանքի գանազան գործերուն մէջ:

Հաւատք բառը բացատրելը կրնայ օրեր պահանջել:

Հաւատքը հասկնալի ու 2024-ի բան մը չէ, գոր կարենանք սորվիլ եւ զարգացնել մեր մէջ, այլ գործնական կերպով կրնանք արտացոլել: Մէկը մեզ հաւատք չի ծախեր, ոչ ալ ճաշարաններու մէջ կը գտնենք, որպէսզի անով սնուցանենք մեր անձերը: Հաւատքը մարդուն ինքնաբերական ներսիդէն կու գայ, ինքնիրեն կը բխի, դուրս կ'ելլէ, եւ մարդիկ մեր գործերուն ընդմէջէն կը տեսնեն այդ մէկը: Անոր համար կ'ըսենք գործին հաւատացող մարդ:

Հաւատքի բնորոշումները շատ են:

Հաւատք՝ կրօնական պատկանելիութեան: Հաւատք գործի նկատմամբ: Հաւատք գաղափարաբանութեան մը նկատմամբ, եւ այսպէս շարունակաբար: Կրօնական եւ աստուածաբանական հասկացողութեամբ շատ զգուշ պետք է ըլլանք բացատրելու հաւատք բառը:

Հոգեւորականութիւնը ամենարժեքաւոր եւ խորհրդաւոր պարգեւն է տրուած մարդուն: Անոր համար մեր Տէրը կ'ըսէ «Հոգի առաւել է քան զմարմին»: Միայն եկեղեցականներուն չէ տրուած հոգեւորական կոչումն ու տիտղոսը. բոլորս հոգի ունինք, հոգեւոր արարածներ ենք, եւ կանչուած ենք, այդ հոգին սնուցանելու հաւատքով, իսկ հաւատքը գործով:

Այսօր հաւատքը գանազան կերպով կը թարգմանուի ու կը բացատրուի: Երբեմն ճիշդ եւ երբեմն սխալ: Վտանգաւորը այն է, որ մարդիկ հաւատքը կ'ուզեն անջատել կրօնքէն, ըսելով. «Մենք հոգեւորական ենք, եւ ոչ կրօնաւոր» (I am more spiritual than religious):

Կենցաղային օրէնքները, մարդուն կեանքը դասաւորելու համար ստեղծուեցան, որպէսզի հաւատքով արտայայտուին: Կրօնները կը ստեղծուին հոգեւորականութեան եւ հաւատալիքներու ճամբով: Քրիստոնէական կրօնքն ալ ներշնչականութեան արդիւնք է. շունչի մը, որ Աստուածային է, եւ ոչ թէ օրէնքի եւ կամ պարզ մարդու մը ստեղծագործութիւնը: Անոր համար Պօղոս առաքեալ կ'ըսէ. «Բոլոր Ս. Գիրքերը Աստուծոյ շունչով գրուած են»: Ահա Աստուածաշունչ անունը: Այդ շունչը այդ հոգին, խօսքն էր, Բանն էր՝ Աստուածութիւնը: Այդ խօսքը Բանը մարդացաւ, Յիսուս Քրիստոս Աստուածամարդուն մէջ:

Այսօր մեզի համար այս բոլոր մտածումներով, հետեւեալ հարցումն է կարեւորը, իմ հաւատքս որքանով ազդեցիկ եւ օրինակելի կը դառնայ ուրիշին համար:

Այսօր մենք շատ դիւրութեամբ կրնանք հաւատացեալ կոչել մենք զմեզ «հաւատացեալ եմ», «ամէն կիրակի եկեղեցի կու գամ», «տունը կ'աղօթեմ», սակայն մարդիկ չեն կրնար այդ մէկը տեսնել մեր մէջ: Մտաթէսի աւետարանին մէջ կը կարդանք. «Ձգեցէք որ ձեր լոյսը տարածուի»: Որքան ալ խելացի ըլլանք, որքան ալ Աստուածաշունչը գոց սորվինք, Աւետարանական եւ հոգեւոր մարգանքներու հետեւինք, դարձեալ մեր հաւատքը չի զարգանար եւ չ'արտացոլէր եւ օրինակելի չի դառնար, եթէ այդ հաւատքին լոյսը չտարածենք մեր գործին ընդմէջէն:

Ամենապարզ եւ Աստուածային օրէնքներուն անգիտակից մարդը, կրնայ ամենաիմաստուն մարդէն աւելի հաւատք ունենալ, իր գործերուն եւ բարի արարքներուն համար: Անօթիին հացի մասին խօսիլը դիւրին է, հաց տալն է կարեւորը:

«Բայց պետք է գիտնալ, ո՞վ սնտոյի մարդ, թէ հաւատքը առանց գործերու մեռած է» (Յկ 2. 20):

Վարդան Վրդ. Թաշճեան
Հոգեւոր Հովիւ
Ս. Գեորգ Եկեղեցոյ



ԿԱՅԿԱՅՈՒՄ

ՄՈՐ ՄԸ ԾԱՆԱՊԱՐՀԸ



Դեռատի մայր մը ոտքը դրաւ կեանքի ճանապարհին վրայ... «Արդեօք երկա ր է ճամբան»:

«Այո», ըսաւ իր Առաջնորդը, եւ ընթացքը դժուար է: Պիտի ծերանաս մինչեւ հասնիս անոր վերջաւորութեան: Ան կանգ առաւ եւ գորովալից ժպիտով ըսաւ. «Վերջաւորութիւնը սկզբնաւորութենէն շատ աւելի լաւ պիտի ըլլայ»:

Սակայն երիտասարդ մայրը այնքան ուրախ էր եւ չէր կրնար հաւատալ, թէ որեւէ բան կրնար այս սկզբնական շրջանէն լաւ ըլլար: Ան իր գաւակներուն հետ խաղցաւ, ճամբուն վրայ ծաղիկներ քաղեց եւ անոնց հետ լողաց գուլալ վտակներուն մէջ: Արեւը կը շողար իրենց վրայ եւ կեանքը շատ լաւ էր: Երիտասարդ մայրը գոչեց. «Ոչինչ կրնայ ասկէ լաւ ըլլալ»:

Ապա գիշերը եկաւ եւ փոթորիկ եղաւ, ու ճամբան մթազնեցաւ: Պզտիկները վախով սկսան դողալ ցուրտին, ու մաման զիրենք իր մօտ քաշեց եւ զանոնք իր ծածկոցով ծածկեց: Երեխաները ըսին. «Ո՛հ, մայրի կ, մենք չենք վախնար, երբ դուն մեր մօտն ես»:

Մայրը ըսաւ. «Ասիկա պայծառ օրերէն աւելի լաւ է, քանի որ գաւակներու քաջութիւն սորվեցուցի»:

Յետոյ առաւօտ եղաւ. բլուր մը կար իրենց առջեւ: Պզտիկները մագլցեցան ու յոգնեցան: Մաման ալ յոգնած էր, բայց շարունակեց քաջալերել իր գաւակները. «Քիչ մը համբերութիւն, եւ հոն պիտի հասնինք»: Ուստի երեխաները շարունակեցին մագլցիլ: Երբ գագաթը հասան, ըսին. «Առանց քեզի հոս պիտի չկարենայինք հասնիլ, մամ»: Եւ երբ մաման գիշերը քնանալու մտաւ, աստղերէն վեր նայեցաւ եւ ըսաւ. «Ասիկա նախորդէն աւելի լաւ է: Զաւակներս արիւթիւն սորվեցան դժուարութիւններու դիմաց: Երէկ անոնց քաջութիւն սորվեցուցի եւ այսօր գորութիւն»:

Յաջորդ օրը տարօրինակ ամպեր եկան եւ երկիրը խաւարեցաւ... Պատերազմի, ատելութեան եւ չարիքի սեւ ամպեր: Պզտիկները սրդողեցան եւ մոլորեցան: Մայրը ըսաւ. «Վեր նայեցէք: Ձեր աչքերը խաւարէն վեր տեսան յաւիտենական փառքը»: Այդ Լոյսը զիրենք խաւարէն եւ չարիքէն դուրս առաջնորդեց:

Այդ գիշեր մաման ըսաւ. «Ասիկա բոլորէն գերազանց օրն էր, քանի որ օգնեցի գաւակներուս, որ սորվին զԱստուած տեսնել»: Օրեր անցան, շաբաթներ, ամիսներ ու տարիներ յաջորդեցին իրար: Մայրիկը ծերացաւ, մինչեւ որ փոքրացաւ ու կըրեցաւ: Սակայն իր բարձրահասակ գաւակները զօրաւոր էին եւ քաջութեամբ կը քալէին: Երբ ճամբան դժուար ըլլար, կ'օգնէին իրենց մօրը:

Երբ ընթացքը խորտուբորտ էր, անոնք զայն կը շալկէին, քանի որ փետուրի մը պէս թեթեւ էր ան: Ի վերջոյ բլուրի մը հասան, եւ անկէ անդին տեսան փայլուն ճամբայ մը եւ ոսկեայ դուռ մը, որ լայն բացուած էր:

Մայրիկը ըսաւ. «Ճամբորդութեանս վերջաւորութեան հասած եմ: Հիմա գիտեմ որ իրապէս վերջաւորութիւնը սկզբնաւորութենէն աւելի լաւ է, քանի որ գաւակներս կրնան առանձին քալել եւ անոնք իրենցմէ վերջ, իրենց գաւակներուն պիտի սորվեցնեն ճամբան»:

Զաւակները ըսին. «Մայրիկ, դուն միշտ մեզի հետ պիտի քալես, նոյնիսկ երբ դոներէն ներս գացած ես»: Տղաքը կանգնեցան եւ դիտեցին, թէ ինչպէս մայրը առանձին գնաց եւ դոները գոցուեցան իր ետին: Անոնք ըսին. «Զինք չենք տեսներ, սակայն ան մեզի հետ է: Մեր մայրը յիշատակէ մը շատ աւելին է»:

«Առաքինի կինը ո՞վ կրնայ գտնել: Անոր գինը գոհարներէն շատ աւելի է...»

«Անոր տղաքը կ'ելլեն ու գանիկա երանելի կ'անուանեն: Անոր այրն ալ գանիկա կը գովէ ըսելով. “Շատ աղջիկներ առաքինի եղան, բայց դուն ամենէն գերազանցը եղար”»: Վայելչութիւնը սուտ է, ու գեղեցկութիւնը ունայն է: Սակայն Տիրոջմէ վախճող կինը պիտի գովուի»:

«Տուէք անոր իր ձեռքին պտուղէն, ու անոր գործերը դոներու մէջ պիտի գովեն գանիկա» (Առ 31:10-31):

Հրահաս

ԱՂՕԹԵ 
Ո՞վ Տէր, մեր Աստուածը, Դուն, որ քու անսահման սիրովդ զիս ոչինչէն ստեղծեցիր քու անիմանալի պատկերովդ եւ բարի պարգեւներովդ իմ բոլոր պէտքերը կը հոգաս, ամբողջ սրտով շնորհակալութիւն կը յայտնեմ քեզի ամէն բանի համար, որ տուիր ինձի ծննդեանս օրէն մինչեւ այսօր. ամէն:



ՌԻՄԱԿՈՐԻՉ

WESTERN ONES, WESTERN CHURCHES

The Sacrament of Renewal

From the Resurrection until Pentecost, every Sunday is given its special name. Just as there are fifty days of repentance before Easter to prepare ourselves for the great victorious holiday, so are there fifty days after Easter, full of spiritual joy, in continuation with the Resurrection's sacrament, victory, and delight.

Let us reflect upon the Sunday following Easter itself. Eastern churches designate it as Renewal Sunday, while the Western ones call it White or Low Sunday. In the Armenian Apostolic Church, it is known as Grgnagiragi, repeated Easter, as the celebrations of Easter are repeated and the same spiritual enthusiasm is felt all over again.

If we listen closely to the chants sung during New Sunday, we realize how strongly the Sacrament of Renewal is emphasized. Just as rebirth and regeneration are important in nature, so is renewal vital for human life. In the spring, everything in nature experiences a revival: trees blossom and grow their leaves again, fields turn green, birds fill the air once more with their playful chirping. All of these elements are also important for the renewal of our inner life.

Love, faith, and many other ideas that shape our inner life



must often be viewed in a new light. This light is the eternal light of Christ Himself, the supreme restorer of our life. Jesus restored the Old Testament by establishing the New through his preaching and commandments, his life anointed with his own blood. His apostles, inspired, were reborn through his preaching, his resurrection, and the same renewal that guides each and every one of us believers.

The apostle Paul stressed, in his letters, the necessity in becoming a 'new man,' a 'new creature.' "That ye put off concerning the former conversation the old man, which is corrupt according to the deceitful lusts; And be renewed in the spirit of your mind; And that ye put on the new man, which after God is created in righteousness and true holiness." (Ephesians 4:22-24) And he adds, "But though our outward man perish, yet the inward man is renewed day by day." (Corinthians 4:16)

This Christian sacrament of renewal is present on New Sunday, or Grgnagiragi.

Even today, one is in need of RENEWAL, from sins and death past.

Church Vestments



In the Armenian Church, part of the physical preparation for the Divine Liturgy is vesting of the priest when he puts on vestments, which show he is God's special servant about to begin a sacred path. As the priest puts on each vestment, he says a special prayer successively asking for salvation, righteousness, cleanliness of heart, faith and strength to serve God.

Vestments Worn in the Divine Liturgy

Shabig (Alb) is a long extending tunic down to the ankle. The Celebrant's Shabig worn during the Divine Liturgy is always plain and made of white linene. It is the first vestment to be put on beneath the others. It shows the gladness of spirit with which the priest must approach the Lord's Table. The white Shabig also symbolises purity.

Poroorar (Stole) is about nine inches wide and four feet six inches long. It is of the same material as the cope. At one end it has an opening for the neck and it hangs down in front over the Shabig. It is in fact the deacon's stole worn round the neck with the two stripes.

Kodi (Zone or Cincture) is a band of about two or three inches wide and long enough to go round the waist. Usually it is of the same material as the cope. It has a buckle in front. It is worn by the celebrant over the Shabig and Poroorar, at the waist. It symbolises faith which gives strength to the soul and the priestly authority of binding and loosing.

Pazban (Maniple or Cuff) is about five or six inches wide and long enough to go round the fore part of the forearm, over the sleeves of the alb (Shabig). It is of the same material as the cope. Pazbans are worn by the celebrant during the Divine Liturgy, symbolising moral cleanliness as well as strength which enable Christians to serve the Lord.

Vagas (Superhumeral or Amice) is a hard flexible piece, covered with the same material as that of the cope, or of a colour to match with the cope or the crown. It has a linen piece, long enough so that one end is attached to the top edge of the Vagas from inside. The cope is put on this hanging piece of linen, so that the Vagas is kept well in place. The Vagas symbolises righteousness in obedience to Christ as against the "stiffness of the neck", and also the "blocking" of temptations from view and hearing.

Shoorchar (Cope) is a piece, semi-circular in shape and made of fine rich material of any colour or colours, provided one colour is dominating. The Shoorchar is worn by a priest or bishop during the Divine Liturgy. It is also worn during other services for reading the Gospel or for special solemnities. Symbolically it represents the glory of the new spiritual life and of the faith, as shield and defence against the attacks of the Evil One.

Saghavard (Crown or Helmet) is a tall bulbous headdress, covered with fine rich silk or velvet cloth. The crown is worn by the Celebrant at certain times during the Liturgy. It symbolises the salvation of the soul from the bondage of the spiritual enemy and the royal attribute of Christ the King, whom the priest represents, enabling the Christian to fight against the Evil One.

ՄԱՆԿԱՊԱՏԱՆԵԿԱՆ

ՄԵՆՔ ԹԱՆԿԱԳԻՆ ԵՆՔ ԱՍՏՈՒԾՈՅ

«Ով Աստուած, թանկագին են քու խորհուրդներդ» Սղ 139:17


Եթէ կարենայիր քու մեջդ բան մը փոխել, ի՞նչ պիտի փոխէիր: Աչքիդ կամ մազիդ գո՞յնը: Աւելի բարձրա՞հասակ կամ աւելի կա բճ պիտի ուզէիր ըլլալ: Ի՞նչ պիտի փոխէիր:

Գիտե՞ս, թէ դուն եղածիդ պէս Աստուծոյ յատուկ ես: Ան շինեց քեզ եւ զիս եւ բոլորս մասնայատուկ կերպով: Մեզմէ ոչ ոք բթամատի մը չափ միւսին կը նմանի: Դուն բոլորովին մասնայատուկ կերպարանք ունիս:

Դուն ոչ միայն մասնայատուկ երեւոյթ մը ունիս, այլ մասնայատուկ կարողութիւն ունիս: Աստուած մեզմէ իւրաքանչիւրին տաղանդ մը տուած է, Իրեն ծառայելու համար: Այդ տաղանդը կրնայ ըլլալ երգել, խօսիլ, ճաշ եփել, հիւանդի հոգ տանիլ, ինքնաշարժ նորոգել, օդանաւ քշել, կամ ոստիկան մը ըլլալ:

Աստուծոյ համար դուն շատ թանկագին ես, որովհետեւ Ան քեզ շինեց: Մի փափաքիր փոխուիլ: Ընդհանրապէս եղիւր Տիրոջմէն քու վիճակիդ համար:

God Made Me!



"Know that the LORD is God. It is he who made us, and we are his." Ps. 100:3a, NIV

Ears	Eyes	Hands	Feet	Mouth	Heart
------	------	-------	------	-------	-------

Գանատայի Հայոց Թեմի Կիրակնօրեայ Դպրոցներու նպատակն է Հայաստանեայց Առաքելական Եկեղեցւոյ դասնործեան եւ ասանդործեան համաձայն՝ մեր մանուկներուն եւ պատանիներուն ջանքել կրօնական դաստիարակութիւն եւ եկեղեցւոյ վերաբերեալ գիտելիքներ եւ ծանօթութիւններ:

Ձեր զաւակները Կիրակնօրեայ Դպրոց արձանագրելու համար, կրնաք հեռաձայնել ձեր շրջանի եկեղեցիներու գրասենեակները:

Կիրակնօրեայ Դպրոցի ժամերն են՝ Կիրակի առաւօտները ժամը 10:30-1:00:



ՈՒՍԱՒՈՐԻՉ

ԾԻՍԱԿԱՆ ԳԻՏԵԼԻՔՆԵՐ

Ի՞ՆՉ Է ՎԵՐԱԲԵՐՈՒՄԸ

Բուն Պատարագը սկիզբ կ'առնէ այն ժամանակ, երբ սարկաւազը ազդարարելով կը հրամայէ, որ ատենէն դուրս ելլեն բոլոր անոնք որոնք մկրտուած չեն՝ երախայ են, թերահաւատ են եւ ապաշխարող: Այս մէկը ինքնին յիշեցում մըն է, որ Ս. Պատարագի մասնակցութիւնը եւ եկեղեցւոյ անդամակցութիւնը մեծ առանձնաշնորհում մըն է: Ասիկա նախապատկերն է այն իրողութեան, թէ ժամանակներու աւարտին եւ երկինքի արքայութեան հաստատումէն յետոյ, Աստուած Իր ընտրեալներուն հետ առանձին պիտի բնակի, այլ խօսքով՝ միայն անոնք պիտի բնակին Աստուծոյ հետ որոնք Անոր հաւատացին եւ այս աշխարհի մէջ Անոր կամքը կատարեցին ու դարձան Անոր գործակիցներ:

Այս ժամանակ պատարագիչը, ով որ ալ ըլլայ՝ կաթողիկոս թէ եպիսկոպոս, վարդապետ թէ քահանայ, իր վրայէն կը հանէ զարդերը, այսինքն՝ կոնքերը, արտախորակները, եմփորոնը, սաղաւարտը կամ խոյրը, հողաթափը, մատանին, պանակէն ու լանջախաչը, եւ Աստուծոյ դիմաց կը ներկայանայ քահանայական պարզ զգեստով. ասիկա իր մէջ ունի այն խորհուրդը թէ Աստուծոյ դիմաց բոլորն ալ մեծն մինչեւ փոքր, ինչ պաշտօնի կամ դիրքի վրայ որ կը գտնուին՝ հաւասար են, նաեւ կը խորհրդանշէ քահանայի յօժարութիւնը, յանձն առնելու մերկանալ աշխարհային զբաղումներէն ու խորհուրդներէն, սրբութեամբ ընթանալու Աստուծոյ ճանապարհէն:

Մինչ դպիրները կ'երգեն «Հրեշտակային»ը՝ քերովբեական երգը, վերյիշեցնելով հրեշտակները, որոնք երկնքի մէջ անընդհատ կը փառաբանեն եւ կ'օրհնաբանեն զԱստուած ըսելով. «Սուրբ, սուրբ, սուրբ» (Ես 6.6. Յտ 4.8), աւագ սարկաւազը աջ կողմի խորհրդանոցէն հանդիսաւոր կերպով պատարագիչ քահանային կը մօտեցնէ ծածկուած Սկիհը, որ կը պարունակէ նշխար ու գինի: Ինչպէս որ Աւետարանի թափօրի ժամանակ Քրիստոս մեզի կը յայտնուի Իր խօսքով, հիմա Վերաբերումի ժամանակ, Ան մեզի կը յայտնուի ուղղակի Իր Մարմնով ու Արեամբ: Սա նաեւ կը խորհրդանշէ Քրիստոսի փրկարար մուտքը Իր երկրաւոր առաքելութեան մէջ, յաղթական քալումը մեղքի ու մահուան վրայ, ինչպէս նաեւ Քրիստոսի դէպի խաչ բարձրանալը մարդոց փրկութեան համար պատարագուելու, որովհետեւ Ս. Սեղանը կը խորհրդանշէ Քրիստոսի գոհագործումը խաչին վրայ:

Այս պահուն հաւատացեալները պէտք է խորհրդածեն իրենց մօտիկ թէ հեռաւոր անցեալի կեանքին վրայ, եւ մեղքերէն թօթափուելով, որոշեն հետեւիլ Քրիստոսի, իրենց խաչը պոնելով յանձնառու ըլլան մինչեւ իսկ ժամանակաւոր տառապանքին՝ Քրիստոսի հետ, ինչպէս եւ մեռնիլ ու յաղթել Անոր հետ: Հաւատացեալները պէտք է խնդրեն նաեւ, որ Աստուած ընդունի իրենց հոգեւոր նուէրները՝ Քրիստոսով, ինչպէս նաեւ նոր ուխտ մը կնքեն իրենց կեանքերը Աստուծոյ նուիրելու, ընծայաբերելու: Թելադրելի է, որ այս պահուն հաւատացեալները եւ ամբողջ եկեղեցին ճնկաչոք հետեւին կատարուած Խորհուրդին:



ՍՈՒՐԲԵՐԸ ԵՒ ՄԵՆՔ

ՔՐԻՍՏՈՍԻ ՀԱՐՍԵՐԸ

Հոգեզալստեան տօնէն ետք, հայ առաքելական սուրբ եկեղեցին կը յիշատակէ Հոփսիմեանց եւ Գայիանեանց կոյսերու տօնը, որոնց վարքն ու նահատակութիւնը անկիւնադարձային կարեւորութիւն ունին հայ ժողովուրդի կեանքէն ներս, քրիստոնէութիւնը պետական կրօն ընդունման հոլովոյթին մէջ:

Համաձայն մեր պատմագիրներուն՝ Մովսէս Խորենացիին ու Ագաթանգեղոսին, խումբ մը կոյսեր ճգնաւորական կեանքով կ'ապրէին Հռոմի, Սուրբ Պօղոս մենաստանին մէջ: Գայիանէն անոնց մայրապետն էր, իսկ Հոփսիմէն հրաշալի գեղեցկութեամբ եւ առաքինութիւններով զարդարուած կոյսը մը, որուն կնութեան կ'ուզէր առնել օրուան հեթանոս Հռոմի կայսրը:

Երբ կայսրին կողմէ անոր հանդէպ նեղութիւնները կը սաստկանան, կոյսերը կը փախին կայսրութենէն, հասնելով Հայաստանի Վաղարշապատ քաղաքը: Կայսրը այս մասին իմանալով կը դիմէ հայոց Տրդատ թագաւորին, որպէսզի գտնէ զանոնք եւ իրեն յանձնէ:

Տրդատ թագաւոր կը տեսնէ Հոփսիմէն, անոր գեղեցկութենէն կը շլանայ եւ կ'ուզէ տիրանալ անոր, սակայն ապարդիւն: Թագաւորը կը թելադրէ Գայիանէին, որպէսզի միջնորդէ եւ հնազանդութեան հրաւիրէ զայն բայց Գայիանէն առաւել էւս կը խրախուսէր Հոփսիմէն, իր հաւատքին մէջ մտալու, եւ կը յիշեցնէր Աստուծոյ յանձնուելու իր կատարած ուխտին մասին:

Ի վերջոյ չարաչար տանջուելէ ետք, կոյսերը կ'արժանանան նահատակութեան սուրբ պսակին, ընդհանուրը՝ 37 կոյսեր:

Գարեգին Վրդ. Շիրամեան
Հոգեւոր Հովի
Ս. Գրիգոր Լուսաւորիչ Եկեղեցւոյ

UNDER THE AUSPICES OF HIS EMINENCE
ARCHBISHOP PAPKEN TCHARIAN, PRELATE OF CANADA
ORGANIZED BY THE ARMENIAN RELIGIOUS EDUCATION COUNCIL

REFOCUS

10th Annual Youth Gathering at Camp IAWAH

JUNE 9-10, 2018

PRELACY: (514) 856-1200
LAVAL: (450) 688-6795
TORONTO: (647) 838-0097
CAMBRIDGE: (519) 623-6372
VANCOUVER: (604) 626-9627
MONTREAL: (514) 331-5445 X202

REGISTER: WWW.ARMEIANPRELACY.CA
DEADLINE: MAY 20, 2018
PARTICIPATION FEE \$80

ՄԱՅԻՍ

2018

Երկուշաբթի	Երեքշաբթի	Չորեքշաբթի	Հինգշաբթի	Ուրբաթ	Շաբաթ	Կիրակի
	1	2	3	4	5	6
7	8	9	10	11	12	13
14	15	16	17	18	19	20
21	22	23	24	25	26	27
28	29	30	31			

ՀՈԳԵՒՈՐ ԽՕՍՔ

«Ուել մէկուն որեւէ բանով պարտական մի՛ մտաք. Միմիայն իրար սիրելու պարտաւորութիւնը ունեցէք, քանի որ իր ընկերը սիրողը կատարած կըլլայ Աստուծոյ Օրէնքը»: Հո. 13:8

- Մայիս 10**
Համբարձում
- Մայիս 13**
Երկրորդ Ծաղկազարդ / Մայրերու Օր
- Մայիս 20**
Հոգեզալուստ
- Մայիս 21**
Վիկտորիա Օր
- Մայիս 27**
Հայաստանի Ա. Հանրապետութեան 100-ամեակ
- Մայիս 28**
Տօն Սուրբ Հոփսիմեանց
- Մայիս 29**
Տօն Սուրբ Գայիանեանց



416
292 5506

OPTICAL MART


Garo Kassabian, R.O.

- EYE EXAM ON PREMISES
- HUGE SELECTION OF QUALITY AND DESIGNER FRAMES
- SUNGLASSES & CONTACT LENSES
- BEST VALUE & SERVICE
- FAMILY BENEFITS & MOST VISION PLANS ACCEPTED

Լաւագոյն ակնոցներ յարմարագոյն գիներով
Կառուսեցէ՛ք զո՞ն սիւտի մնաց

Կը գնահատենք ձեր քաջալերանքը
We appreciate your patronage

Eye Exam Centre | Contact Lens Clinic
Optometrists Every Day | Designer Glasses



1415 KENNEDY RD. #14 TORONTO, ON M1P 2L6 TEL.: (416) 292-5506
NEW LOCATION IN RICHMOND HILL:
LESLIE & ELGIN MILLS PLAZA MEDICAL CENTER



Հովանավորությամբ
Գանատայի մօտ ՀՀ արտակարգ և լիազոր դեսպան
Սեծայարգ Պրն. Լեւոն Մարտիրոսեանի

Քեպեի Հայ Համայնքի Միացեալ Մարմինը
Կը կազմակերպէ


**Հայաստանի Հանրապետության
եւ Մայիսեան Հերոսամարտերուն
Հարիւրամեակի Տօնակատարութիւն**

օրուան պատգամաբեր՝

Դոկտ. Աշոտ Մելքոնեան

(Հայաստանի Գ.Ա.Ա.-ի Պատմութեան Ինստիտուտի Տնօրէն)

Գեղարուեստական յայտագիր մասնակցութեամբ
Հանրածանօթ երգիչներու՝



Կապի Կալոյան եւ Ռուբէն Սասունցի
Ընկերակցութեամբ՝

Համազգայինի «Անի» զոյգ պարախումբերուն

Կիրակի, 13 Մայիս 2018-ին, երեկ. ժամը 6:30-ին

Centre Arménie

(1025 Boulevard Élisabeth, Laval, QC H7W 3J7)

Հիւրասիրութիւն ձեռնարկի աւարտին
Մուտքի նուէր՝ 20\$

Nora Gurunlian, Hamazkayin 514 856 0868 - Salpi Margossian, Tekeyan 514 747 6680 - AGBU Office 514 748 2428

Ձեռնարկի գլխաւոր նուիրատուներն են՝ **Տէր եւ Տիկին Ալպէր եւ Լէյլա Արոյեան**




Association Médicale Arménienne du Québec
 Armenian Medical Association of Quebec
 Քեպեզի Հայ Բժշկական Ընկերակցութիւն

Flexible Dieting

Dr. Laura Patakfalvi

GP Hospital Medicine Expert
 Professor at McGill University



May 24th, 2018
 7:00pm

Centre Arménie
 1025 Boul. Élisabeth,
 Laval, QC H7W 3J7

Sponsored by:



Arto Mouradian



Հովանաորութեամբ
 Գերազնորհ Տ. Բարգէն Ալք. Չարեանի
 Առաջնորդ Գանատայի Հայոց Թեմի



Ազգային Առաջնորդարանը և
 Համագրային Գանատայի Շրջանային Վարչութիւնը
 'Ին կրաւիրեն ձեզ
 Բժիշկ Ժիրայր Պասմաճեանի
 Կեղարուեստի գործերու ցուցահանդէսին



Բացում՝ Ուրբաթ, 15 Յունիս 2018, երեկոյեան ժամը 8:00-ին
 Մոնթրէալի Հայ Գեղարուեստի Անտիա Անարունեան սրահին ներս
 3401 Rue Olivar-Asselin, Montréal, QC H4J 1L5
 Ցուցահանդէսը կը շարունակուի
 Շաբաթ, 16 և Կիրակի 17 Յունիս 2018
 ժամը 11:00-էն 3:00

ANI

Ristorante

905.761.6484

1450 Clark Ave. West,
 Thornhill ON L4J 7R5

LOOKING FOR FULL TIME CHEF TO GRILL



www.aniristorante.ca

*Fine Dining
 Catering
 Party Room*
 FOR UP TO 50 PEOPLE



**Pharmacie
Levon Benohanian et
Mher Koubelian Inc.**
Pharmaciens-propriétaires

3915, Boulevard Samson
Laval, QC H7W 2G1



T 450 688-4111
F 450 681-5525
proximlaval@gmail.com

Lun. au vend. : 8h30 à 21h
Sam. et dim. : 9h à 17h
Infirmière (jeudi) : 8h30 à 15h



Անվճար սպասարկուքի ն մինչեւ ձեր տունը.
Շաբաթական դեղատուփիկի պատրաստութիւն.
Ազատ փոխադրում ձեր դեղացանկի (dossier)
այլ դեղարանէ. Դեղերու պատուաստում
(vaccination) հիւանդապահի կողմէ.

Բուժական հետեւում՝
արեան բարակութեան (INR), շնչերակային
ճնշման (tension artérielle), արեան շաքարի
(glycémie capillaire), արեան մաղձաճարպի
(cholesterol), եւն.

Manoir Gouin
Résidence pour
aînés autonomes
et semi-autonomes

À partir de **995\$**
Tous les repas, collations et supervision
médicale inclus
1½ à 4½

Gicleurs automatiques
dans chaque appartement

Մեզ հոս ուրախ եք
Պոն. Իրեկեան

Պատահաք տեղի 4 ունեւնայ
յւր շնչաւսեւն տոբէն ներս:

Il n'y a pas d'âge pour être heureux!

12300 boul. Laurentien, Montréal H4K 2Z6
514.335.1881 • www.manoirgouin.com

**VERDUN ADULT
& CAREER CENTRE**

PROGRAMS OFFERED

- Residential and Commercial Drafting
(Diplôme d'études professionnelles (DEP))
- Plumbing and Heating
(Diplôme d'études professionnelles (DEP))
- Computing Support and Networks
(Diplôme d'études professionnelles (DEP))

GROUPS STARTING SOON!
CALL US FOR MORE INFORMATION
WWW.LBP.CE.CA/VACC | 514.798.0405

Start your new career in 16 months!
Financial Assistance is available
Diploma recognized by the
Ministry of Education

Where To Find Us
6050 boulevard Champlain,
Verdun, QC
H4H 1A5
Tel: 514-798-0405
STM Member of the STM Group

Հիանալի աշխարհային Գանատայի մ.թ. իրենց մասնագիտութիւնը
կիրարկելու ուզող կամ աշխատանքի նոր առիթներ
փնտրող անհատներու համար

LBP
Lester B. Pearson
Verdun Adult and Career Centre

ԱՅՍ ԱՆԿԻՒՆԷՆ Ո՛վ է հայը, Ի՞նչ է հայը Գ.

Երբ կը փորձեմ բնութագրել այսօրուան հայը, երկրորդ յատկանիշը, որ անվհատությունն է, ես քանակապես կը մտաբերեմ՝ անոր աշխատասիրությունն է:

Նայեցէք ձեր շուրջը, ձեզի ծանօթ ազգակիցներուն մէջ քանի՞ հոգի կը տեսնէք, որ ծուլութեամբ յատկանշուի:

Այո՛, աշխատասէր է հայը եւ շինարար, ստեղծագործ: Օրինակներ չեն պակաս, ըլլա՛յ անցեալէն, ըլլա՛յ ներկայէն, որ ապացուցեն ասիկա: Բանաստեղծն ալ աննկատ չէ՛ անցեր այս երեւոյթին վրայէն... «... Պարզապէս գիտեմք ժայռից վանք կերտել, / Քարից շինել ձուկ / եւ թռչուն՝ կալից...», կամ՝ «... Ծիցնի եմ կամուրջ, / Կապել եմ կամար, / Ամեն տեղ հերկել, / Հասցրել բերքեր...»:

Այո՛, ո՛ւր որ ալ երթայ, անօթի չի մնար հայը, ուրիշին օգնութեան կարօտ չի մնար հայը, շուտով կը ստեղծէ բարօր կեանք իրեն ու իր ընտանիքին համար: Այլեւ յաճախ ալ կը յաջողի տնտեսական նախանձեղի դիրքերու հասնել:

Սակայն ճակտի քրտինքով իր պարուտը վաստակելու այս աւանդական առաքինութիւնն ալ կարծէք խախտելու վտանգին առջեւ է, եթէ չէ խախտած արդէն: Աշխատիլ ու աշխատանքի վաստակը վայելելը ունի նաեւ բարոյական յարանշանակութիւն (connotation) մը, որ սկսած է նսեմանալ կարծէք: «Անաշխատ եկամուտ»-ի ախտը ընդհանրացեր է, մանաւանդ մեր հայրենի հողին վրայ՝ խորհրդային տարիներուն, ապա տարածուեր քիչ մը ամեն տեղ:

Տարբեր պատճառներ ու պատճառաբանութիւններ կարելի է գտնել այս երեւոյթին համար: Գլխաւորը դրամատիրական համակարգն է, որ ոչ միայն քաջալերեր է, այլեւ հիմնուեր է այդ սկզբունքին իսկ վրայ: Արդարեւ, եկամտային հսկայ տարբերութիւնները հասարակութեան տարբեր խաւերուն միջեւ կրնան մարդ արարածը մղել նման «մոլութիւն»-ներու: Ուրիշը աշխատեցնելու, նուազագոյն աշխատավարձով աշխատեցնելու ու անոր ստեղծած յաւելեալ արժէքէն ինքնիրեն համար առուելի շահ ապահովելու ձգտումը՝ հիմն է դրամատիրութեան ներկայ հասարակարգին: Հասկնալի է, որ նախաձեռնողը, սկզբնական դրամագլուխը դնողը, գործ մը մէջտեղ բերողը որոշ առուելութիւն ունենայ գործի արդիւնքին բաշխման մէջ, սակայն հարկերով կամ հազարապատիկ եկամուտ ապահովէ՝ բաղադրամամբ բո՛ւն գործը կատարողին՝ արդէն գայթակղեցուցիչ է ու փորձութեան կ'ենթարկէ պարզ աշխատաւորը, մանաւանդ եթէ այս վերջինն այնքան ալ չի տարբեր իր կարողութիւններով ու ձեռքերով, որոնց հետ ոչ մէկ անմիջական առնչութիւն կ'ունենայ իր կուտակած հարստութիւնը:

Զարտուղի ճանապարհներով արագ հարստանալու ցանկութիւնը խոտոր կը համեմատի աշխատասէր մարդու նկարագրին հետ: Տուրքերէ խուսափումը, առանց անհրաժեշտ պատրաստութեան եւ իրաւաստութեան գործեր ստանձնել կարենալու յաւակնութիւնը, ապօրինի վաճառքներով հարստութեան կուտակումը եւ այլն՝ աշխատասիրութեան առաքինութեան հետ կապ չունին:

Այս հիւանդութիւններով վարակուած հայերը քիչ չեն:

Աշխատասիրութիւնը նաեւ չի կրնար առնչուիլ միայն սեփական ճիգերուն: Այստեղ այլ նկարագրային թերութիւններ կրնան միջամտել, ինչպէս, օրինակ՝ եսասիրութիւնը, ընչաքաղցրութիւնը: Աշխատիլ, դիրք կերտել միայն քու եւ քու անմիջական ընտանիքի՞դ համար, թէ՞ նաեւ հաւաքականութեան, որուն կը պատկանիս, եւ որուն բարօրութիւնը է՛ նաեւ քո՛ւ բարօրութիւնը: Բազմապատկումն իսկ է այդ բարօրութեանը: Ասոր մէկ երեւոյթը աշխատանքային հարկերէ խուսափումն է, միւսը՝ համայնքին կեանքէն մեկուսի ապրիլը, նիւթապէս ու բարոյապէս անմասնակից մնալը, որեւէ բարեբարութիւն չկատարելը եւ այլն:

Աշխատասիրութեան այս մարզին մէջ կայ նաեւ ուրիշ երեւոյթ մը, որ կը չարչրկէ միտքս երկար ատենէ ի վեր: Այդ՝ միակամութեան կամ միասնականութեան երեւոյթն է, որ կ'ազդէ մեր վարկին՝ հայո՛ւ վարկին, իր բացակայութեամբ՝ գործի ասպարէզէն ներս: Ինչո՞ւ չենք յաջողիր անձնական ուժերն ու կարելիութիւնները քով-քովի բերելով աւելի մեծ ձեռնարկութիւններ ստեղծել, աւելի նշանակալից իրագործումներ իրականացնել: Միայն Սարգսրապատի պատին տա՛կ է՝ երբ դանակը ոսկորին հասած է, որ մէկ բուռնցքի կը գիտնանք վերածուիլ...

Քիչ մը շատ հեռու գացի այս մտորումներու մէջ:

Կայ նաեւ հպարտութեան հարցը, որուն կ'արժէ անդրադառնալ՝ նախքան այս շարքը փակելը:

ՎՐԷԾ-ԱՐՄԷՆ
(շար. 3 եւ վերջը յաջորդիւ)

Կինը կեանքի հիմն է, կեանքի աղբիւրը

2001 թ.-ից, երբ հնգամեայ ընդմիջումից յետոյ հայկական մեր պետական տնտեսուցումը, վերականգնուեց մարտի 8-ի գեղեցիկ տօնը, որպէս կանանց տօն ձեւաւորուեց մի նոր, աննախադէպ տօնական աւանդույթ, որը ժողովուրդը կոչեց կանանց միամսեակ. այն տեւում է Մարտի 8-ից մինչեւ Ապրիլի 7-ը: Եթէ Հայաստանում չվերականգնուէր Մարտի 8-ը, չէր լինի նաեւ մեր սքանչելի կանանց մեծարման միամսեակը, մայրութեան եւ գեղեցկութեան տօնը:

Գանատայում Fête des mères, մայրերի տօնը, նշում է Մայիս ամսին:

Միմեանց որքան են նման մայրերը, աշխարհի բոլոր մայրերը, իրենց անքուն գիշերներով ու բազում հոգսերով, նման են նաեւ իրենց հրճուանքով ու մայրական անախ հպարտութեամբ: Գրողներն ու արուեստագէտները միշտ էլ սնուել են յաւերժութեան երկու աղբիւրներից՝ մայր-բնութիւնից եւ մայր-կնոջից: Մեր կեանքի շիկացած պահերին, մենք դիմում ենք մայր-բնութեանը, մենք ոգեշնչւում ենք մայր հայրենիքի գաղափարով, մենք երազում ենք մայրական հոգատար ու բարի ձեռքեր: Զօրեղ է մայր-բնութիւնը, սակայն մայր-կինը ամենահրաշագործն ու անփոխարինելին է: Որքան բազմազան լինեն կնոջ գեղեցկութեան դրսեւորումները, նրա առուելագոյն գեղեցկութիւնը՝ մայրութեան մէջ է:

- ... Խոնարհում եմ ես քո առջ,
- Մայր, սրբութիւն, ամենասուրբ,
- Մայր, նրբութիւն ամենասուրբ,
- Դու արեւից զօրեղ արեւ
- Այս ջերմաշունչ արեւի տակ...:

Դարերէ ի վեր, մեր մայրապաշտ հայ ժողովուրդն էլ ամենանուիրական հասկացութիւնները բնորոշել է «մայր» բառով: Ասում ենք մայր հայրենիք, մայր ժողովուրդ, մայրենի լեզու, մայրաքաղաք: Բազմազան երգեր, հարիւրաւոր բանաստեղծութիւններ, վէպեր, կտաւներ են ձօնուել մօրը: Եւ երբ հաւատով լեցուն աղօթում ենք տիրամօր պատկերի առջեւ, նրա աչքերի մէջ նախեւառաջ մայրական կարեկցանք ու սփոփանք ենք փնտռում, յուսալի խօսք: Եւ այն, որ մօրը նուիրուած բանաստեղծութիւնները յուզառատ են ու բացառապէս քնարական, հասկնալի է ինքնստինքեան:

... Մօր սրտի պէս, սիրող սիրտ

Չեմ հաւատում, որ լինի,
Անրիծ հայեացք ու ժպիտ,
Չեմ հաւատում, որ լինի...

Մեր մայրերը գալիս են յաւերժից ու գնում դէպի յաւերժութիւն. մօր թեման գրականութեան յաւերժական նիւթն է: Սովորաբար, երբ մեր կողքին է մայրը, յաճախ ենք մոռանում նրան, այսպէս մարդ կարող է մոռանալ միայն ինքնիրեն: Բաւական է կարճատեւ անջատումը, կամ ամենանապաստիւն, յաւերժ հրաժեշտը, նոր միայն զգում ես այն հաւաւոր անդուռը, որ միայն մայրը կարող էր լցնել, եւ ուրիշ ոչ ոք. եւ ինչո՞ւ չկայ մի բացառութիւն, որ մայրը մնայ...

Եւ ծնում են կարօտի, թախծի տողեր.

... Մայրը չի մեռնում, այլ ցա մումի պէս
Այրու՛ւմ ու հալու՛ւմ, հալու՛ւմ, փոքրացնում
Ու մի օր անտես, անհաւատալի, հոգու թեւերով
Ելնում է երկինք...
Կորիւն Առաքելեան

Հայ կինն է այն մշտափառ կրակը, որն արթուն է պահում հայրենիքից դուրս հասակ առնող մեր մանուկների հայկականութիւնը, հայ կինն է այսօրուայ եւ վաղուայ պատանիների ու աղջիկների համար մայրենի առաջին ուսուցիչն ու իմաստուն դաստիարակը, աւանդույթ փոխանցողն ու պահպանը. հայ ընտանիք, հայ եկեղեցի, հայ մշակոյթ: Մեր պատմութեան ընթացքում, հայ կինը միշտ էլ իր գերակատարումն է ունեցել: Կանանց բազմաթիւ կառոյցների շարքում իրենց մեծագոյն նուիրումն ու ներդրումն են ունեցել եւ ունեն: Յիշատակենք կանանց ամենամեծ, ամենահզօր կառոյցը՝ ՀՕՄ-ը, այն ստեղծուել է 1910-ին, եւ կոչուել Հայ Յեղափոխական Դաշնակցութեան Կարմիր Ուժ: Մէկ հազարամեակ է արդէն, որ կառոյցը գլխաւոր մայր է եւ հոգատար քոյր իր ժողովրդի համար, որի կողքին է բոլոր փորձութիւնների պահերին:

Երբ սիրում ենք, ուրեմն՝ կանք

Իւրաքանչիւր կին մի պատմութիւն է, որը նման չէ մէկ ուրիշի պատմութեանը, ապրում են իրենց ստեղծած գունագեղ աշխարհում, ուր կայ յոյս, հաւատ եւ ամենակարեւորը՝ սէր: Երբ՝ աղբիւր ունեն մարդու հակումները՝ հոգին, բանականութիւնն ու մարմինը: Հոգու հակումները ծնում են բարեկամութիւն, մարմնի

հակումները ծնում են ցանկութիւն, խելքի հակումները ծնում են յարգանք: Երեք հակումների միացումը ծնում է Սէ՛ր: Սէ՛րը աստուածային շնորհ է, այն ընծայում է երջանկութիւն, հորիզոններ յաղթահարելու ամենագօրութիւն. սէրը նաեւ տառապանք է, ընդվզում աշխարհի, մարդու, ինքն իր դէմ... Աէրն է դէպի գեղեցիկը տանող ճանապարհը: Դարեր շարունակ, սէրը եղել է արուեստագէտների ոգեշնչման աղբիւրը.

Ի սկզբանէ, երբ այս հողագնդի,
Ծովերի մէջ Աստուած մայրցամաքներ դրեց,
Այդ ցոյն Աստուածն իմ մէջ
Սէրը տեղադրեց...

Ալիսիա Կիրակոսեան

Բացարձակ (աքսիոմ) ճշմարտութիւն կարելի է համարել այն, որ իրօք երջանիկ ընտանիքի գրաւակաւնը սէրն է: Կնոջ երջանկութիւնն առաջին հերթին սիրուած լինելու մէջ է: Անկախ նրա մասնագիտութեանից, նոյնիսկ՝ մակարդակից, կեանքի պայմաններից, ապրելակերպից, նա երջանիկ է, եթէ սիրուած է: Երջանկութեան համար կնոջ նուիրումը սահման չունի: Կինը գործում է ինչպէս՝ սիրտը: Նա ուզում է ամէն ինչ, կամ՝ ոչինչ: Իսկ դա սիրուած լինելն է, երջանկութեան չափանիշը: Կինը շատ է տիեզերական, շատ է անհաստական: Նրա մէջ էլ մայր կայ, է՛ւ սիրուհի, է՛ւ աստուած: Արար աշխարհում թո՛ղ մօր անհատի պաշտամունք լինի, յիշենք ձեռքերը, աչքերը բարի եւ սիրտը նրա: Կին, որ է՛ւ սիրում է, է՛ւ ծնում, է՛ւ մայր է, կարո՞ղ է գէնքն իր ձեռքը վերցնել, եւ երանի թէ հայ կնոջ լաւագոյն գէնքը վարդերը լինէին:

Շնորհաւորում եմ մեր ժողովրդի ամենապայծառ, ամենագեղեցիկ կէսի, մեր սիրելի կանանց, մայրերին, տատիկներին:

Թո՛ղ Հայաստանի երկնակամարում միայն խաղաղութիւնը թեւածի, եւ թո՛ղ հայ մայրերի գեղեցիկ աչքերը թրջուեն միայն ուրախութեան եւ յաղթանակի բերկրանքից:

Խոնարհումս բոլոր մայրերին եւ կանանց.

Մաղթում եմ արեւշատութիւն եւ երջանկութիւն:

Անահիտ Զորպաճեան
Գեղազու-մանկավարժ

 Այցելեցէք Ս. Յակոբ Առաջ. Մայր Եկեղեցոյ Կիրակոսեայ դպրոցի կայքէջը՝ www.sourphagop.org

 Այցելեցէ՛ք Թորոնթոյի ամենօրեայ վարժարանի բարեկարգուած կայքէջը՝ / Visit our new website www.arsarmenianschool.ca

Ազգային Ժողովի ՀՅԴ Խմբակցությունը Հանդիպում Ունեցավ Նիկոլ Փաշինեանի Հետ

Ապրիլ 30-ին, Ազգային ժողովին մէջ տեղի ունեցած է «Ելք» խմբակցութեան ղեկավար Նիկոլ Փաշինեանի հանդիպումը ՀՅԴ-ի խորհրդարանական խմբակցութեան ներկայացուցիչներու հետ:

Հանդիպումի ընթացքին քննարկուած են ներքաղաքական իրավիճակը եւ անկէ բխող ելքերը:

Դաշնակցութիւնը միշտ ալ միասնական եղած է, մեր կուսակցութեան հետ կապուած այդպիսի կասկածներ չեն կրնար ըլլալ. վարչապետի թեկնածուի հետ հանդիպումէն ետք լրագրողներուն ըսած է Ազգային ժողովի ՀՅԴ խմբակցութեան ղեկավար Արմէն Ռուստամեան՝ պատասխանելով այն հարցումին, թէ ՀՅԴ-ն ինչպէ՞ս է պիտի քուէարկէ:

«ՀՅԴ-ն միշտ միակամ եւ միաձայնութեամբ յայտնած է իր տեսակէտը: Մենք մեր տեսակէտը նախօրոք յայտնած ենք, որ այս փուլին առաջադրուելու պարագային պիտի սատարենք Նիկոլ Փաշինեանի թեկնածութեան», ըսած է Ռուստամեան:

Ռուստամեան նշած է, որ իրենք շատ յստակ կը պատկերացնեն, որ վարչապետ ընտրելէ ետք Հայաստանի մէջ պիտի յառաջանայ նոր իրավիճակ, որուն մասին ալ խօսած են Փաշինեանին հետ:

«Բովանդակային առումով մեր մտեցումներուն միջեւ տարբերութիւններ գոյութիւն չունին: Ասիկա մեզի համար ամէնէն սկզբունքայինը եղած է, որ հասնինք այս եզրակացութեան: Ես չեմ ուզեր փակագիծերը շատ բանալ, բայց խօսքը կը վերաբերի արտաքին ու ներքին քաղաքականութեան ուղղութիւններուն: Իրարու հետ փորձած ենք համադրել մեր տեսակէտները, եւ իսկապէս ոգեւորող է, որ լուրջ տարակարծութիւններ չունինք», ընդգծած է ան:

Պատասխանելով այն հարցումին, թէ 1 մայիսին պիտի ընտրուի՞ վարչապետ, ան ըսած է. «Յոյսով եմ՝ մեր հիմնական մտահոգութիւնը դարաբաղեան ճակատին կը վերաբերի: Այս ամէնը այսքան երկար ձգձգել կարելի չէ, որովհետեւ որքան երկար այս վիճակը, այնքան մեր երկիրն կը թուլանայ, այնքան մեր թշնամիին ախորժակը կ'աւելնայ: Ասիկա մենք պէտք է ամէն ձեւով բացառենք: Այստեղ ՀՅԴ-ն պիտի ըլլայ անգիջում, ամէն ինչ պիտի կատարէ, որ բացառէ թշնամիի ախորժակին աւելնալը»:

Անդրադառնալով այն հարցումին, թէ ինչո՞ւ դուրս եկան համաձայնական դաշինքէն, Ռուստամեանը պատասխանած է, որ անոր համար երկու պատճառ կար: «Համաձայնական դաշինքէն դուրս եկած ենք, քանի որ համաձայնական դաշինքի յուշագիրը այս արտակարգ իրավիճակին մէջ չէր գործեր, եւ որ մենք կարենանք ինքնուրոյն մեր կարեւոր նկատած ծրագիրներն ու մարտավարութիւնը իրականացնել: Մենք չենք կրնար այն դաշտին մէջ ըլլալ, ուր գրուած է, որ վարչապետի առաջադրման իրաւունքը կը պատկանի Հանրապետականին: Որպէսզի սատարենք մեզի համար ընդունելի, ժողովուրդին կողմէ վստահութիւն վայելող թեկնածուին, նախ պէտք է դուրս գայինք այդ յուշագիրով սահմանուած կաշկանդումէն: Ասիկա կարելիութիւն տուաւ, որ ՀՅԴ-ն մտնէ այս գործընթացին մէջ: Ժամանակը կու գայ, կը տեսնէք, որ Դաշնակցութիւնը այստեղ խաղցած է կարեւորագոյն, լրջագոյն դերը», եզրափակեց պատգամաւորը:

«Գուսան» երգչախումբը ելոյթ ունեցավ Մոնթրէալի մէջ



Համազգային Հայ Մշակութային եւ կրթական միութեան Թորոնթոյի «Գլաճոր» մասնաճիւղի «Գուսան» երգչախումբը ելոյթ ունեցաւ Շաբաթ, 7 Ապրիլ 2018-ի երեկոյեան, Մեծն Մոնթրէալի «Սանահին» մասնաճիւղի կազմակերպութեամբ՝ Centre Armenie-ի սրահէն ներս, Լաւալ:

Երգչախումբը ներկայացաւ շուրջ չորս տասնեակ քառաձայն անդամներով, խմբավարութեամբ Հռիփսիմէ Թովմասեանի եւ դաշնակի ընկերակցութեամբ Վանիկ Յովհաննիսեանի:

«Սանահին» մասնաճիւղի վարչութեան ատենապետուհի ընկհ. Թամար Շահինեան ընդգծեց զոյգ մասնաճիւղերուն սերտ համագործակցութիւնը, որուն արգասիքն է նշեալ ելոյթը:

Դադարին մասնաճիւղի «Քնար» երգչախումբէն ընկհ. Քարէն Եփփէ Սերայտարեան խօսք առնելով անդրադարձաւ զոյգ արուեստագէտներուն՝ խմբավարին ու դաշնակահարին, վաստակներուն իրենց արուեստի բնագաւառէն ներս:

Բժախնդրօրէն համադրուած, թիւով քսանէ աւելի դասական եւ ժողովրդական երգերու ընտրանիին մաս կազմեցին ծանօթ ու նոր ստեղծագործութիւններ, նաեւ հոգեթով մենակատարումներ Գոհար Գրիգորեանի, Սեւակ Յարութեանի, Մինէ Ծատուրեանի, Նուէր Ղազարեանի եւ Լեւոն Գարակիլլեանի կողմէ:

Ելոյթը կ'արտացոլէր համազգայնականներուն բժախնդիր աշխատանքը, որով Համազգայինը անգամ մը եւս ներկայացաւ հանրութեան, որպէս իր առաքելութեան յանձնառու եւ նախանձախնդիր կազմակերպութիւն:

Ջերմ մթնոլորտը շարունակուեցաւ երկար, Լաւալի Հայ կեդրոնէն ներս. «Սանահին» մասնաճիւղի հիւրընկալութեամբ, երգչախումբի անդամներն ու «Սանահին», «Գլաճոր» եւ Շրջանային վարչութիւնէն ներկայացուցիչներ համադրած ընթրիքի սեղանին շուրջ, երգերով, նուագով ու ասմունքներով անմոռանալի պահեր պարգեւեցին բոլորին:

Լուսանկարը՝ Յակոբ Գուգուեանի

Քեպէզ քաղաքի հայութիւնը Աշտիկ Մեծ Եղեռնի 103-ամեակը



Ապրիլի 24-ին, ինչպէս ամէն տարի, այս «դամբանի մրուրով» գրուած մեր պատմութեան ամենէն տխուր թուականին, հաւաքուեցանք դարձեալ Կոմիտասի կիսանդրիին շուրջ, հոգ չէ թէ այլ համայնքներու հետ բաղադատած՝ փոքր թիւով, սակայն նոյնքան հաւատարիմ ու պահանջատէր, ոգեկոչելու համար մեր մէկուկէս միլիոն զոհերուն յիշատակը, հարիւր եւ երեք տարիներ ետք:

Նախքան վերոյիշեալ տարեկան մեր հանդիպումը, Մոնթրէալէն ու Լաւալէն ժամանած խումբ մը հայերով եւ կարգ մը քեպէզահայերով ուղուեցանք Խորհրդարան՝ ներկայ ըլլալու ժողովի ընթացքին Ապրիլ 24-ի առիթով կարդացուելիք «Motion»ին, որ, ամէն տարուան պէս, ընդունուեցաւ միաձայնութեամբ:

Չափազանց տպաւորիչ էր մեր նահատակներուն հանդէպ սրահի բոլոր ներկաներուն յոտնկայս մէկ վայրկեան լուովեամբ արտայայտած յարգանքն ու մեծարանքը:

Կոմիտասին «ողջոյն» մը տալէ ետք, մոնթրէալահայերն ու Լաւալի հայերը վերադարձան իրենց տունները:



«Չորիզոն» շաբաթաթերթի 2018 թուականի վարժողական ծրագիր

Գանատայի աշխատանքի եւ ընկերային զարգացման պետական բաժանմունքին կողմէ տրամադրուած յատուկ ֆոնտով, «Չորիզոն» շաբաթաթերթը այս տարի կը նախաձեռնէ ուսանողական վարժողական ծրագիր:

- Աշխատանքի մանրամասնութիւններ**
- «Չորիզոն»ի ամենօրեայ խմբագրական աշխատանքներու ծիրէն ներս թարգմանութիւններ կատարել, անգլերէն, հայերէն եւ ֆրանսերէն լեզուներով:
 - Գաղութային ձեռնարկներու թղթակցութիւններ կատարել:
 - Հարցախոյզներ կազմակերպել:
 - «Չորիզոն»ի վարչական աշխատանքներուն օգնել:
 - Բաժանորդագրութիւններու գործընթացը հետապնդել:
 - Արխիւներ դաստարել:

- Պայմաններ**
- Թեկնածուն 15-30 տարեկան, երկրորդական վարժարանի, Cegep-ի կամ համալսարանի ուսանող պէտք է ըլլայ:
 - Պէտք է լիաժամ ուսանող ըլլայ, որ վարժողական ծրագրէն ետք վերստին իր ուսումը շարունակէ:
 - Պէտք է Գանատայի քաղաքացի, մնայուն բնակիչ, կամ Immigration and Refugee Protection Act-ի օրէնքներով սահմանուած ապաստանեալ (Refugee) ըլլայ:
 - Պէտք է աշխատելու իրաւունք ունենայ:

- Աշխատանքի տեսողութիւն եւ վարձատրութիւն**
- Վարժողական այս ծրագրի դիմումները կը սկսին Մայիս 1-ին: Ծրագիրը կը սկսի Յունիս 18-ին եւ կ'աւարտի Յուլիս 27-ին:
 - Ծրագրի տեսողութիւն է 6 շաբաթ, շաբաթական 30 ժամ աշխատանքային ժամով եւ 12.00 տոլար ժամական վարձատրութեամբ:

Ձեր դիմումագրերը ուղարկեցէ «Չորիզոն»ի հասցէին մինչեւ Յունիս 8
 3401 Olivier-Asselin, Montreal, Quebec, Canada H4J 1L5
 Կամ Ե-նամակով ուղարկել «Չորիզոն»ի վարչական պատասխանատու
 Սիլվա Էրիսմանի հասցէին՝ sylvia@horizonweekly.ca

Այցելեցէք hitunes.ca կայքէջը եւ օրական 24 ժամ ունկնդրեցէ Սառա Եղիայեանի կողմէ ընտրուած հայկական երգերը

Ունկնդրեցէ triktrak.ca կայքէջի հայկական համացանցային ռատիոժամի երգերը օրական 24 ժամ, իսկ ամէն հինգշաբթի երեկ. ժամը 8:00 - 9:00 լսեցէ շահեկան հարցազրոյցներ

HITUNES.CA **TRIKTRAK.CA**

ԳՐԱԻՈՒԱՆ ԹՈՒԱԿԱՆՆԵՐ

Համազգայինի 90 ամսակի ձեռնարկներ՝
 Մոնթրեալ 14 Հոկտեմբեր 2018
 Թորոնթո 27 եւ 28 Հոկտեմբեր 2018
 Կը խնդրուի չխաչաձեւել

ՄՈՆԹՐԷԱԼ

Համազգային Սանահին մասնաճիւղի «Պետրոս Աղամեան» բառերախումբ
 ԲԱԲԵԼՄՆԻ ԱՇՏԱՐԱԿ
 3-4 Նոյեմբեր 2018
 Մանրամասնութիւնները յետագային:

ԼԱԻԱԼ

Մայրերու Օր-Համբարձում. Կազմակերպութեամբ ՀՕՄԻ Լաւալի «Շուշի» մասնաճիւղի Ոսկետարիի յանձնախումբին: Երեքշաբթի, 8 Մայիս 2018, կ.ա ժամը 11:00-էն սկսեալ, Nuits de Beyrouth Ճաշարանին մէջ, Լաւալ: Տոմսի գին՝ 25 տոլար: Հեռաձայնել ընկի. Մանան Ապրաքեանին 450 689-5342 թիւին:

ԺՈՂՈՎՆԵՐ

ՀՄԸՄ ԼԱԻԱԼ ՄԱՍՆԱՃԻՂԻ ՏԱՐԵԿԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎ.
 Զորեքշաբթի, 9 Մայիս 2018-ին, երեկոյեան ժամը 8:00-ին, Լաւալի Հայ կեդրոնի Պարոնեան սրահէն ներս:



Թորոնթոյի «ՆՈՐ ՀԱՅ ՀՈՐԻԶՈՆ» յատագիրը կարելի է դիտել Շաբաթ առաւօտները ժամը 9:00-էն 10:00, իսկ Նոյն յայտագրի կրկնութիւնները Կիրակի օրերը առաւօտեան ժամը 7:00-8:00 եւ Երեքշաբթի օրերը կեսօրուայ ժամը 12:00-1:00 OMNI 1 կայանէն:

«Հայ Դորիզոն» հեռատեսիլի յայտագիրը կը սփռուի հետեւեալ կայաններէն եւ ժամերուն՝

Videotron: HD616 կամ SD16	Շաբաթ- 08:30 (առաջին տիւրում)
Bell Fibe: HD1216 կամ SD216	Կիրակի- 07:30am
	Երկուշաբթի- 08:00am
	Երեքշաբթի- 08:30am
	Չորեքշաբթի- 7:30pm
	Հինգշաբթի- 10:30am, 8:30pm
	Ուրբաթ- 5:00pm
	Ուղիղ արձակում՝ www.icitelevision

ՃԱԾԿԵՐՈՅԹ... Սկիզբը էջ 5

դեց աշակերտներուն, մէջըբերելով Յովհաննէս Թումանեանի մէկ բանաստեղծութիւնէն հետեւեալ նախադասութիւնը. «Ապրէ՛ք երեխէ՛ք, բայց մեզ պէս չապրէ՛ք»:

Պրն. Գէորգ Օհանեան շնորհակալութեամբ յիշեց Ռոզիկ Վարդանուշ Մուրառեանի եւ Ս. Գէորգ եկեղեցւոյ Հողաբարձութեան օժանդակութիւնը, ինչպէս նաեւ հետեւեալ նուիրատուութիւնները.

- 6 000\$ Bridge-ի խմբակէն
- 22 000\$ Հայ Կեդրոնի Տարեցիներու միութիւնէն
- 55 000\$ «Բաստրմաճեան» հիմնադրամէն
- 12 000\$ ՀՕՄ-ի Լաւալի «Շուշի» մասնաճիւղէն
- 14 000\$ ՀՕՄ-ի Շրջանային վարչութիւնէն
- 64 000\$ ՀՕՄ-ի Մոնթրէալի «Սօսէ» մասնաճիւղէն
- 500\$ Համազգայինի «Սանահին» մասնաճիւղէն
- 250\$ Լ.Յ.Դ. «Սարգիս Աէյթիեան» կոմիտէէն
- 10 000\$ տիկին Շաքէ Կէօնճեանէն
- 10 000\$ տէր եւ տիկին Կարօ եւ Լենա Գատեանէն

Ճաշկերոյթի աւարտին Առաջնորդ Սրբազան Հայրը գնահատեց վարժարանի բոլոր բարերարները, պատասխանատուները, կրթական մշակները, ճաշկերոյթի կազմակերպիչ յանձնախումբը եւ իր օրհնանքէն առաջ խօսքն ու երեկոն եզրափակեց ըսելով. «Եկէ՛ք նիւթը հոգիի վերածննք եւ կապարը՝ ոսկիի»:

«ՎԱՐԴԳԷՍ ԵՒ ԱՍՏՂԻԿ ՍԱՐԱՖԵԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄ»-Ի ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ

«Վ. եւ Ա. Սարաֆեան Հիմնադրամ»-ի տնօրէնութիւնը 2018-2019 ուսումնական տարեշրջանին համար, կրթաթոշակ պիտի յատկացնէ արժանաւոր ուսանող(ուհի)ներու:

Թեկնածուները պարտին նահանգիս համալսարաններէն մէկուն մէջ հետեւիլ նախընտրաբար Մանկավարժութեան, Լրագրութեան, Ընկերային կամ Քաղաքական գիտութեանց ճիւղերուն:

Դիմումագիր ստանալու համար կապուիլ հիմնադրամի ել-նամակի հասցէին՝ fondationsarafian@gmail.com

Դիմումագիրը ամբողջացնելէ եւ պահանջուած փաստաթուղթերը մէկտեղելէ ետք՝ ուղարկել միայն վերեւ նշուած ել-նամակի հասցէին, որպէս մէկ եւ ամբողջական յաւելում:

ԴԻՄՈՒՄՆԱԳԻՐ ՆԵՐԿԱՅԱՑՆԵԼՈՒ ՎԵՐՁՆԱԿԱՆ ԺԱՄԿԷՏՆ Է՝ 31 ՅՈՒՆԻՍ 2018

ALINE BEKEREJIAN
 NOTAIRE • NOTARY
ՆՈՏԱՐ ԱԻՆ ԴԵՔԵՐԵՃԵԱՆ

Achat	Ստեւտոր	Purchase
Hypothèque	Անշարժ Կալուածք	Mortgage
Refinancement	Վերաֆինանսատրում	Refinance
Mandat	Պատուիր	Mandate
Testament	Կտակ	Will
Succession	Կալուածք	Estate
Marriage	Սնուանութիւն	Marriage
Procuration	Փոխակորուցիչ	Power of Attorney

180, rue Fleury ouest
 Montréal, Qc, H3L1T5

T 514.382.7222
 F 514.381.1818

aline.b@notarius.net
www.abnotaires.com

ծառայութիւնները կը մատուցուին Արաբերէն, Հայերէն, Փրանսերէն, եւ Սկզբէն լեզուներով:

Services offerts en Arabe, Arménien, Français et Anglais
 Services offered in Arabic, Armenian, French and English.

horizon
HORIZON
Hebdomadaire arménien
Armenian Weekly
 Publié par / Published by
Les Publications Arméniennes
 (1991)
 3401, Olivar-Asselin
 Montréal, Québec
 Canada H4J 1L5

Abonnement annuel / Yearly subscription
 Canada
 2^e classe - 2nd class: \$80 plus applicable taxes
 1^{re} classe - 1st class: \$95
États-Unis / USA
 1^{re} classe - 1st class: \$95 US
Ailleurs / Elsewhere
 1^{re} classe - 1st class: \$125 US

Administration / Publicité
 Sylva Eshramdjian-Bachekjian
(General Manager)
 Tél.: (514) 332-3757
 Télécopieur/Fax (514) 332-4870
 E-Mail: sylva@horizonweekly.ca
 Courrier de deuxième classe
 /No. 40065294 / Second class mail
 Dépot légal: bibliothèques nationales du Québec et du Canada - ISSN 0708580X

Գրիգոր Հոբոյեան, (416) 494-1921
 Ժազ Վարպետեան, (416) 722-9225

Վարիչ Խմբագիր
 Վահագն Գարագաշեան
Վարչական պատասխանատու՝
 Սիլվա Պաշոգճեան
Քարտուղար՝ Մարինա Տէր Խաչատուրեան
Աագ խմբագիր՝ Վրէժ-Արմէն Արթիմեան
Անգլերէն/Ֆրանսերէն՝ Վիգէն Արքա-համեան, Թինա Սիլվահեան
Չեւատրում՝ Նէնսի Կիրակոսեան
Սրբագրիչ՝ Սոնա Թիթիգեան

Լուսանկարիչներ՝ Արմէն Ալեմեան, Մայր Թաշճեան, Իշխան Գազարեան, Վազգէն Տէկիրմէնքաչ

Financé par le gouvernement du Canada

Funded by the Government of Canada

Canada



CASSANDRA HEALTH CENTRE
 10:53
Rexall I.D.A. CASSANDRA PHARMACY
CASSANDRA CLINIC WALK-IN & FAMILY PRACTICE
 416.331.9111
Dr. Marinosyan accepting new patients (416) 331-9111

Dr. Rupert Abdalian
Gastroenterology

Dr. Mari Marinosyan
New Family Doctor

Dr. Omayma Fouda
Family Physician

Dr. H. Kavazanjian
Family Physician

Dr. I. Manhas
Family Physician



CASSANDRA I.D.A. PHARMACY

ARMENIAN MEDICAL CENTRE & PHARMACY

PHARMACISTS
SARKIS BALIAN, BScPhm, RPh
MARAL BALIAN, PharmD, RPh
VARTAN BALIAN, PharmD, RPh

ՍԵՓԱԿԱՆԱՏԵՐ՝
 ՊԱԼԵԱՆ ԸՆՏԱՆԻՔ

ԴԵՂԱԳՈՐԾՆԵՐ՝
 ՄԱՐԱԼ ՊԱԼԵԱՆ
 ՎԱՐԴԱՆ ՊԱԼԵԱՆ

- Դեղագիրներու պատրաստութիւն՝ շաբաթական յատուկ տուփերու մէջ:
- Արեան ճնշման քննութիւն եւ հետեւողականութիւն՝ անվճար
- Շաքարախտի քննութիւն
- Դեղերը իրենց հասցէներուն առաքելու անվճար սպասարկութիւն
- Տարեցներու 10% զեղչ
- Կը յարգենք եւ սիրով կը կատարենք բոլոր ապահովագրական ընկերութիւններու պայմանները
- Walk-In Clinic բաց է շաբաթը 6 օր: Կրնաք բժիշկները տեսնել առանց ժամադրութեան:

Դիմեցէք մեզի եւ պիտի դառնաք մեր մնայուն յաճախորդը:
Walk-in Clinic onsite: (416) 331-9111

հասցէ՝ 2040 Victoria Park Ave. (Victoria Park & Cassandra)
 Toronto, Ontario M1R 1V2 Tel : (416) 449-2040 Fax: (416) 449-2048



BARRY



KAREN



GARO

KAZANDJIAN



514
333-3000

DEMANDEZ UNE ÉVALUATION GRATUITE

4020, Av. de la Paix

À VENDRE 399 000 \$

11960 Av. du Beau-Bols

À VENDRE 1 475 000\$ ou 5 500\$/mois

12280 Av. Antoine-Berthelet

À VENDRE 1 395 000 \$

11485, Frigon

À VENDRE 698 000 \$

12181, Guérin

À VENDRE 519 000 \$

1693-1695 de Salaberry

À VENDRE 798 000 \$

12212, Av. Martin

À VENDRE 1 495 000 \$

Av. Beau-Bols

À VENDRE 798 000 \$

9, Pl. de Domèvre

À VENDRE 439 000 \$

2080, Ch. Hanover

À VENDRE 1 995 000 \$

1535, Boul. Alexis-Nihon

À VENDRE 329 000 \$

11380, Frigon

À VENDRE 688 000 \$

204, Ch. Bord-de-l'eau

À VENDRE 369 999 \$

4500, des Cageux app.1001

À VENDRE 339 000 \$

83, des Roseaux

À VENDRE 1 198 000 \$

EXPERTISE

EXPÉRIENCE

EXCELLENCE

CLASSÉS PARMI LES MEILLEURS COURTIERs RE/MAX AU MONDE
RANKED AMONGST THE HIGHEST PERFORMING RE/MAX BROKERS IN THE WORLD

AGENCE IMMOBILIÈRE RE/MAX 3000 | 9280 L'ACADIE, MONTRÉAL, QC, H4N 3C5